Ազգ
Azg
27 ՅՈՒՆՈՒԱՐ 2012 ՈՒՐԲԱԹ 14(4866)
ISSN: 1829-1651

# Կոչ Ամերիկայի կոնգրեսականներին

Ֆրանսիայի խորհրդարանի վերին պալատում՝ Սենատում ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող օրինագծի անցկացման լույսի ներքո «Ամերիկայի հայկական խորհուրդը» Ամերիկայի կոնգրեսականներին կոչ է անում հավատարիմ մնալ ամերիկահայերին տված իրենց խոստումներին եւ վերահաստատել Հայոց ցեղասպանության ճանաչումը, ինչպես նաեւ պաշտպանել «H.R. 304» բանաձեւի ընդունումը:

«Մինչ մենք հանդիսավոր կերպով նշում ենք այս կարեւոր, շրջադարձային իրադարձությունը որպես մարդու իրավունքների պաշտպանության կողմնակիցներ, մենք կոչ ենք անում Ներկայացուցիչների պալատի օրենսդիրներին՝ վերահաստատել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու իրենց խոստումները», ասել է «Ամերիկայի հայկական խորհրդի» նախագահ **Սեւակ Խաչատրյանը**, հավելելով, որ «այս անգամ Թուրքիայի տնտեսական եւ այլ բնույթի սպառնալիքները չկարողացան որեւէ դեր խաղալ այդ բանաձեւի ընդունման հարցում: Ժամանակն է, որ ազատություն եւ ազատամտություն քարոզող մեր երկրի առաջնորդը եւ Կոնգրեսի անդամները նույնպես կարողանան հանուն արդարության նման բարի կամք դրսեւորել»:

«Ամերիկայի հայկական խորհուրդը» համագործակցում է բոլոր կուսակցական ղեկավարների հետ, ներկայացնելով նրանց Հայաստանին եւ հայկական հարցերին նվիրված նյութեր, մեկնաբանություններ եւ նպաստակ ունենալով ամրապնդել Մ. Նահանգներ-Հայաստան եւ Մ. Նահանգներ-Լեռնային Ղարաբաղ կապերը: Այս մասին տեղեկացրել է խմբագրությանը հասցեագրված վերոնշյալ կազմակերպության հաղորդագրությունը:

Հ. Ծ.

ՕՐԵՐԻ ԼԵՏ

# Շնորհակալությո՞ւն, ո՞ւմ, ինչի՞ համար

**Մեր թերթը երեկ տեղեկացրել էր, որ Թուրքիայի վարչապետը նախորդ օրը նախագահ Սարկոզիի ու Ֆրանսիայի Սենատի դեմ ունեցած իր կասատի ելույթում չի մոռացել շնորհակալություն հայտնել այն սենատորներին, որոնք «պատասխանատվության զգացումով դեմ քվեարկեցին օրինագծին»: Առաջին հերթին ներքին՝ թուրքական սպառման համար նախատեսված այդ շնորհակալությամբ Ռեջեփ Թայիփ Էրդողանը փաստորեն ձգտում է ընդգծել, որ այսուհանդերձ շատ սենատորներ (86 հոգի) դեմ են եղել ցեղասպանության ժխտումը քրեորեն պատժելի դարձնող օրինագծին, դրանով ձգտելով իր սեփական «ճշմարտությունը» ապացուցել յուրայիններին, միաժամանակ, իբր, վերջին առիթը տալով Ֆրանսիայի նախագահին առաջիկա 15 օրերին չվավերացնելու Սենատի եւ ողջ Ազգային ժողովի ընդունած որոշումը:**

**Բայց ինչպես ասում է թուրքական ասացվածքը՝ «Յոլ գիդեր՝ քյոր գիդեր» («Ճանապարհն է գնում՝ կույրն է գնում»): Այսինքն՝ գնում է՝ առանց իմանալու՝ ուր եւ ինչպես: Գնում է առանց անդրադառնալու, որ այդ 86 սենատորներից առնվազն նրանք, ովքեր ամենաակտիվն էին Սենատի 7-ժամյա քննարկումների ընթացքում, բոլորն էլ, գրեթե առանց բացառության, ավելի բարձր էին հայտարարում Հայոց ցեղասպանության պատմական անժխտելի իրողություն լինելու մասին: Ուրեմն, փաստորեն, Էրդողանը նրա՛նց է շնորհակալություն հայտնում: Ուրեմն՝ շնորհակալություն իրե՛ն... Թող շարունակի կույր-կույր գնալ իր ճանապարհով:**

**Բաց ասի, Սենատում 86 դեմ քվեարկողների «գործը» հետաքրքրում է, պե՛տք է հետաքրքրի առաջին հերթին մեզ: Հետեւյալ իմաստով. նրանցից շատերը հստակորեն ներկայացրին իրենց դիրքորոշման պատճառները, պարզեցին ու բացատրեցին իրենց վերապահությունները օրինագծին, եւ, ինչպես գրել էի նախորդ հոդվածում, այդ առարկությունները պետք է արժանանան մեր վերլուծաբանների ամենալուրջ ուշադրությանը:**

**Դեմ քվեարկողներից մի խումբ համոզված էր, որ օրինագծի ընդունումը կվնասի հայ եւ թուրք, Հայաստան եւ Թուրքիա հարաբերություններին, իսկ սենատորներից մեկը աներկբայորեն մտավախություն հայտնեց, ըստ երեւույթին լավատեղյակ լինելով թուրքական բնավորությանը, որ օրինագիծը պատճառ կարող է դառնալ «նոր վայրագությունների»:**

**Երկրորդ խումբը օրինագծին առարկում էր, քանի որ, կարծում էր, այն կարող է կաշկանդել խոսքի եւ կարծիքի ազատությունները Ֆրանսիայում:**

**Երրորդ խումբը վախենում էր, որ օրինագծի ընդունումը անօգուտ է լինելու ընդհանրապես եւ անտեղի կերպով կաշկանդելու է Ֆրանսիայի ձեռքերը Թուրքիայի վրա ներազդելու գործում:**

**Չորրորդը եւ, ի դեպ, մեծամասնությունը դեմ էր ոչ թե օրինագծին, այլ նրա՝ ներկա ձեւով ու ձեւակերպումով ընդունվելուն:**

**Անշուշտ, կար նաեւ փոքրաթիվ մի խումբ, որ հավանաբար տնտեսական, քաղաքական, ընկերական եւ այլ շահերից ու շահագրգռություններից ելնելով դեմ քվեարկեց: Եվ դա էլ է բնական: Ֆրանսիացիներն իրենք են ասում՝ բացառությունը հաստատում է օրինաչափությունը:**

**Ուրեմն՝ Էրդողանից առաջ մե՛նք ենք շնորհակալություն հայտնում դեմ քվեարկողներին: Նրանք հաստատեցին օրինաչափությունը:**

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Միացյալ Թագավորությունն էլ է ընդունել օրենք, որ հեռադարձ ուժով կարող է մարդկանց հետապնդել պատերազմական հանցագործությունների համար

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստրասբուրգ

**ԵԽԽՎ ձմեռային նստաշրջանի հրավիրյալ Միացյալ Թագավորության վարչապետ Դեւիդ Քամերոնը նստաշրջանին եկել էր ծավալուն մի ելույթով, որի հիմնական գաղափարն, ու Քամերոնից ուրիշների սպասելիքներն էլ, մարդու իրավունքների եվրոպական դատարանի առնչությամբ փոփոխությունների առաջարկություններն էին:**

**Թվարկելով եվրոպական դատարանի, ըստ բրիտանական կողմի, դիտարկված թերությունները ու փոփոխության ենթակա կողմերը՝ Միացյալ Թագավորության ներկայացուցիչը խոսեց դատարանի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից, նոր կանոններ մտցնելուց, կարեւոր գործերի քննության թափանցիկության ապահովումից, դատավորների նշանակման կարգի բարեփոխումից:**



Արդեն վեհաժողովականների հարցերին ի պատասխան Քամերոնը արձագանքեց ֆրանսիական Սենատի՝ ցեղասպանությունների հերքումը քրեականացնող օրենքի ընդունման մասին թուրք պատվիրակի հարցին:

**«Որեւէ այլ երկրի խորհրդարանի ընդունած օրենքները մեկնաբանելը դժվար է», նշեց վարչապետ Դեւիդ Քամերոնը:**

**Այդուհանդերձ, բրիտանական վարչապետը հիշեցրեց, որ ՄԹ-ն էլ ընդունել է օրենք, որ հետ է նայում՝ «հնարավոր դարձնելով հետապնդել մարդկանց, օրինակ, սահմռկեցուցիչ պատերազմական հանցագործությունների համար»: Քամերոնի կարծիքով, այդպիսի օրենք ընդունելը ճիշտ էր: «Բարձրացված հարցի առումով էլ մեր դիրքորոշումը հստակ է. սահմռկեցուցիչ բաներ են պատահել հայ ժողովրդի հետ, հրեշավոր զազանություններ են կատարվել»: Կարեւորելով ասածը՝ Քամերոնը հայտարարեց, որ, այդուհանդերձ, «մենք պետք է ներկայում ապրենք»:**

Տես էջ 2

# ԵԽԽՎ-ն ընդունեց Թեղուտի, ցեղասպանության եւ Հրանտ Դինքի վերաբերյալ հռչակագրեր

**26 հունվարի 2012թ., Ստրասբուրգ, Ֆրանսիա:** Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում (ԵԽԽՎ) «Ժառանգություն» խմբակցության ներկայացուցիչ **Զարուհի Փոստանջյանը** ԵԽԽՎ լիագումար նիստի ընթացքում շրջանառության մեջ է դրել երկու գրավոր հռչակագիր:

«Թեղուտի տեխնածին բնապահպանական աղետի ծրագրի դատապարտում» վերտառությամբ քննարկման ներկայացված առաջին փաստաթուղթը, որին իրենց ստորագրություններով միացել են 27 պետություն ներկայացնող 44 պատվիրակներ, առնչվում է Հայաստանի բնապահպանական ճգնաժամին եւ մասնավորաբար՝ Թեղուտի խնդրին: Հռչակագրում նշվում է՝ «Մենք խստորեն դատապարտում ենք Հայաստանի կառավարության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների շարունակական ոտնահարումը եւ պահանջում անվավեր ճանաչել Թեղուտի հանքի շահագործման վերաբերյալ բոլոր որոշումները»:

Երկրորդ փաստաթուղթը՝ «Ուշադրության կոչ Թուրքիայում շարունակվող անպատժելիության հետեւանքների վերաբերյալ», որը ստորագրված էր ԵԽԽՎ-ում 24 երկրի 35 պատվիրակների կողմից, անդրադառնում է Հրանտ Դինքի՝ թուրքական պետության կողմից իրականացված սպանության հինգերորդ տարելիցին եւ կոչ է անում ճանաչել հայերի, ասորիների ու հույների ցեղասպանությունները: «Մենք մտահոգված ենք թուրքական իշխանությունների կողմից հայերի, հույների եւ ասորիների նկատմամբ իրականացված ցեղասպանությունների շարունակական ժխտմամբ եւ լրագրողների ու գրողների նկատմամբ հետապնդումների նպատակով քրեական օրենսգրքի 301 հոդվածի օգտագործմամբ»,- ասված է փաստաթղթում: Հռչակագիրն ամբողջությամբ տես՝ http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/WorkingDocs/Doc12/EDOC12849.htm:

# Խաղաղ պայմաններում զոհված զինվորների ծնողները պահանջում են հանդիպում երկրի նախագահի հետ

## *Նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանին նրանք դժգոհություն հայտնեցին զինդատախազ Գեւորգ Կոստանյանից*

Յուրաքանչյուր հինգշաբթի կառավարության շենքի առջեւ ցույցի դուրս եկող խաղաղ ժամանակ բանակում զոհված մի քանի զինծառայողների ծնողները երեկ իրենց դժգոհությունն էին հայտնում նախագահի աշխատակազմի ղեկավար **Վիգեն Սարգսյանին**: Նրանք նշում էին, որ մեկ տարի առաջ, նախագահի հրամանով իրենց ընդունել էր զինդատախազ Գեւորգ Կոստանյանը եւ խոստացել նորից ուսումնասիրել իրենց տղաների մահվան հանգամանքները: Սակայն անցել է մեկ տարի, իսկ որեւէ փոփոխություն ոչ մի քրեական գործում չի եղել: Նրանք պահանջում էին հանդիպում նախագահ Սերժ Սարգսյանի հետ, քանի որ Գեւորգ Կոստանյանը, զոհված զինվորների ծնողների խոսքերով, չի կատարում նախագահի հանձնարարականը:



Վիգեն Սարգսյանը նշում էր, որ բանակում հանցագործությունները չեն կոծկվում, եւ զինդատախազն ինքն է շահագրգիռ, որ դրանք բացահայտվեն: Նրան ի պատասխան՝ ծնողներն ասում էին, որ կոնկրետ իրենց որդիների գործերում ոչ մի բան չի փոխվել: Նախագահի աշխատակազմի ղեկավարը կրկին առաջարկեց հանդիպում զինդատախազի հետ, որին զոհված զինվորների ծնողները կրկին պատասխանեցին, որ ցանկանում են հանդիպել նախագահի հետ: Սակայն, ինչպես մեզ հետ զրուցելիս ասաց զոհված զինծառայողներից մեկի հայրը, նախագահի աշխատակազմի ղեկավարը ոչինչ չխոստացավ: Ինչ վերաբերում է գործերի վերանայման գործընթացին, ապա, զոհվածի հոր հավաստիացմամբ, քննիչները նույն պարզաբանումներն են տալիս, որոնք արդեն կան քրեական գործում, եւ որոնցից էլ հենց իրենք դժգոհ են:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## Ընթացիկ

# Դինքի գործով ողջ ճշմարտությունը բացահայտված չէ նաեւ ըստ դատավորի

## *Ըստ Թոմաս Համմարբերգի, որեւէ խմբի արժանապատվության վիրավորումը կարող է քրեականացվել*




Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հարցերով հանձնակատար **Թոմաս Համմարբերգը** Հրանտ Դինքի դատավարության դատավճռի հրապարակման օրն իսկ գտնվել է Ստամբուլում եւ, ըստ սեփական դիտարկումների, բնակչության մեջ հստակ էր, որ Դինքի գործով եզրակացությունը ճիշտ չէր եւ հաստատապես կգնա ավելի բարձր ատյան՝ բողոքարկման: Պատասխանելով հայաստանյան պատվիրակ **Նաիրա Զոհրաբյանի** հարցին՝ երեկ ԵԽԽՎ ստրասբուրգյան ամբիոնից հայտարարեց Համմարբերգը՝ իր վերջին տարեկան զեկույցն այդ պաշտոնում ներկայացնելուց հետո:

Ըստ Համմարբերգի, համոզմունք կա, որ գործի մեղավորների շրջանակն առավել մեծ է: Սակայն առավել արտառոցն, ըստ Համմարբերգի, այն է, որ դատավարության ընթացքում ողջ ճշմարտությունը բացահայտված չի համարում ոչ միայն մեղադրող կողմը, այլեւ դատավորը: Ամեն դեպքում, Համմարբերգը լավատեսություն հայտնեց, թե բողոքարկման ատյանում արդեն ոչ միայն կստուգեն նախորդ դատավարության ընթացքը, այլեւ նոր փաստեր կուսումնասիրվեն ու կներկայացվեն՝ գործի առավել ընդգրկուն բացահայտմամբ:

Հունգարացի պատվիրակ **Ֆերենց Կալմարը** Համմարբերգին ցավով եւ որպես տհաճ անակնկալ հիշեցրեց, որ մարդու իրավունքների հանձնակատարի տարեկան զեկույցը ոչինչ չի պարունակում փոքրամասնությունների իրավունքների իրավիճակի մասին: Այս կապակցությամբ Համմարբերգը հավաստիացրեց, թե ազգային փոքրամասնությունները «մոռացված խնդիր» չեն, որ այդ հարցը մշտապես բարձրացվում է, եւ այլ բան չավելացրեց:

Ադրբեջանը ներկայացնող **Գարինա Փաշաեւան** իր «պարտքը» կատարեց՝ Համմարբերգին էլ հարցնելով Ֆրանսիայի Սենատի ընդունած օրենքի առնչությամբ կարծիք: Համմարբերգը հիշեցրեց, որ ԵԽ գլխավոր քարտուղար Յագլանդն արդեն անդրադարձել է հարցին, որն **«Ազգը»** ներկայացրել է իր ընթերցողներին: Նշենք, որ գլխավոր քարտուղար **Յագլանդը** կարծիք չէր հայտնել, բայց որպես տարբեր պաշտոններ զբաղեցրած անձ հայտարարել էր, թե պատմությունը պատմաբաններին պետք է թողնել: Համմարբերգը, համաձայնելով այս տեսակետին, այդուհանդերձ, բավականին տարբեր գնահատական հնչեցրեց. «Խոսքի ազատությունը կարող է սահմանափակվել», հատկապես երբ որեւէ խմբի արժանապատվությունը կարող է վիրավորվել:

Թեեւ Համմարբերգը ֆրանսիական օրենքի ընդունումը «ոչ ճիշտ» է գնահատում, բայց նաեւ ընդգծում է, որ թերեւս ֆրանսիական օրենքը օգտակար չգտնվի, քանի որ «քաղաքական մարմինները պետք է որոշեն պատմական հարցերը»: Բայց, մյուս կողմից, Համմարբերգի մեկնաբանությամբ, փաստաթուղթն առավելապես կապ ունի ոչ թե խոսքի ազատության, այլ ատելություն տարածելու խնդրի հետ, ինչը, որպես վիրավորանք որեւէ խմբի, կարող է քրեականացվել, «թերեւս ոչ այս կերպ»:

Հայ պատվիրակ **Զարուհի Փոստանջյանն** էլ Համմարբերգից փորձեց ճշտել, թե ինչպես է հնարավոր Թուրքիային ստիպել լուծելու բանտարկված ու ձերբակալված լրագրողների խնդիրը, որին Համմարբերգն արձագանքեց հիշեցմամբ, որ Թուրքիայի արդարադատության համակարգի մասին վերջերս է զեկույց ներկայացվել, հատկապես Հրանտ Դինքի գործի շեշտադրմամբ, որը «խորհրդանշում է խնդիրը»:

Ինչ վերաբերում է Համմարբերգի տարեկան ու վերջին զեկույցին, այն առանձնակի շեշտադրումներ չունի՝ առավելապես ներկայացնելով արված աշխատանքը՝ այցելությունների, զեկույցների, տարբեր գնահատականների ու հանդիպումների տեսքով, մասնավորապես, ներկայացնելով նաեւ մարդու իրավունքների հանձնակատարի գրագրությունը Թուրքիայում հայաստանցի անօրինական միգրանտների երեխաների՝ կրթություն ստանալու խնդրի առնչությամբ:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Ստրասբուրգ**

# Հովհաննես Թումանյանի Թբիլիսիի բնակարանը ունի գնորդ

«**Ազգն**» իր ընթերցողներին հանգամանալից ներկայացրել է հայ մեծանուն գրող Հովհաննես Թումանյանի՝ Թբիլիսիում գտնվող տան շուրջը ծավալված իրարամերժ լուրերը: ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանի գլխավորած պատվիրակությունը վերադարձել է Թբիլիսիից: Երեկ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ տեղի է ունեցել խորհրդակցություն, քննարկվել է Թումանյանի տան հետագա ճակատագիրը: Խորհրդակցությանը մասնակցել են մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, արտգործփոխնախարար Շավարշ Քոչարյանը, ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը եւ բանաստեղծի թոռնուհի Իրմա Սաֆրազբեկյանը: Վերջինս տեղեկացրել է, որ Թումանյանի թոռնուհին առաջարկել է ամբողջ տարածքը վաճառել հայ գործարարներից մեկին: Թումանյանի բնակարանն ունի արդեն գնորդ, որը գործարքից հետո մտադիր է այն նվիրել Թբիլիսիի հայկական համայնքին՝ հետագայում մշակութային կենտրոնի վերածելու պայմանով: ՀՀ վարչապետի հանձնարարականով արտգործնախարարը բնակարանի վաճառքից հետո վրացական կողմի հետ կքննարկի դա համայնքին հանձնելու հետ կապված իրավական հարցերը:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Միացյալ Թագավորությունն էլ է ընդունել օրենք...

*1-ին էջից*

Բրիտանիայի վարչապետը, Եվրոպայի շահերի առումով ներկայացնելով Թուրքիայի դերակատարությունը, կարծիք հայտնեց, թե «մուսուլմանների, քրիստոնյաների, հրեաների, հինդուների եւ սիկհերի միասին ապրելու լավ օրինակ ցույց տալու համար պետք է Թուրքիան լինի Եվրոպայի կազմում»: Անկախ դրանից, «յուրաքանչյուր եվրոպական երկիր, ներառյալ նաեւ Ֆրանսիան, ինքն է որոշում՝ ինչպես վերաբերվել Թուրքիայի հարցին», թեեւ բրիտանա-թուրքական հարաբերությունները ամուր են եւ Քամերոնն էլ պատրաստակամ է դրանք առավել ամրապնդելու:

Վեհաժողովական **Նաիրա Զոհրաբյանի** հարցին, թե արդյոք Ադրբեջանի տնտեսության մեջ ամենամեծ ներդրումներ ունեցող Միացյալ Թագավորությունը մտահո՞գ է այդ միջոցները ռազմական ճանապարհով ղարաբաղյան հարցը լուծելու համար ծախսվելու հեռանկարով, Քամերոնը հակիրճ արձագանքեց» «Մենք դա չենք ցանկանում: Մենք աջակցում ենք Մինսկի խմբի գործընթացին»:

Պաղեստինյան իրավիճակի առնչությամբ էլ Քամերոնը վեհաժողովականներին պարզաբանեց, որ Միացյալ Թագավորությունը մեծապես կողմ է «երկու պետություն» լուծմանը: «Մենք ուզում ենք Իսրայելը տեսնել ժողովրդավարական, անվտանգ եւ ապահով իր սահմաններում, եւ նոր պետություն Պաղեստինը, որ արժանի տուն կլինի պաղեստինցի ժողովրդի համար»:

***ՌԻՉԱՐԴ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ***

# Ի՞նչ սպասել Թուրքիայից

**Միանգամից նկատենք, որ եթե խոսքը Թուրքիայի մասին է՝ ապա չի բացառվում ոչինչ: Սակայն տարածաշրջանային ուսումնասիրությունների կենտրոնի ղեկավար Ռիչարդ Կիրակոսյանի կարծիքով՝ «Հնարավոր է, որ Թուրքիան վերադառնա ֆուտբոլային դիվանագիտությանը եւ վերսկսի հարաբերությունները Հայաստանի հետ»: Երեկ հրավիրած ասուլիսում Կիրակոսյանը վստահեցրեց նաեւ, որ ֆրանսիական Սենատի ընդունած հայտնի բանաձեւի համապատկերում «Հայաստանի արտաքին քաղաքականությունը զարգանում է եւ ամրապնդվում ինչպես Թուրքիայի հետ հարաբերություններում, այնպես էլ ԼՂՀ հարցում»: Կոնկրետ Սենատի ընդունած բանաձեւի առնչությամբ քաղաքագետը նկատեց, որ այս օրինագիծը «ուժեղ ազդակ է Թուրքիային»: «Ցեղասպանության ճանաչմանն ուղղված միջազգային շարժում է սկսվել, որը չի կարելի կասեցնել: Ընդ որում այսօր ճանաչման գործընթացն ավելի ուժեղ է եւ ավելի մեծ ճնշում է Թուրքիայի վրա, քան նախկինում էր», ասաց Կիրակոսյանը: Իսկ Հայաստանի պարագայում, օրինագծի ընդունման կարեւորության մասին խոսելիս քաղաքագետը նշեց. «Հայաստանի համար օրինագծի ընդունման ազդեցությունը եղավ ընդամենը 3 կգ-ի տեսքով, բայց այսօր ունենք Սարկոզի, ինչն էլ ցույց է տալիս Հայաստանի համար այս խնդրի կարեւորությունը»:**

**Իսկ որ Անկարան կվերադառնա ֆուտբոլային դիվանագիտությանը՝ Կիրակոսյանը հիմնավորեց վարկածով, որ այդպիսով «նա հույս ունի թուլացնել Ցեղասպանության ճանաչման գործընթացը առաջիկայում»: Այդուհանդերձ քաղաքագետը նկատեց, որ Թուրքիան այսօր երկարաժամկետ խնդիրներ ունի հարեւանների հետ եւ առհասարակ «ծանրաբեռնված է արտաքին աշխարհում», մասնավորապես՝ «Սենատի այս որոշմամբ Թուրքիայի առջեւ փակվեցին ԵՄ-ի դռները, ու նա պետք է շրջվի դեպի Արեւելք, նույն ընթացքում փորձելով վերականգնել Հայաստանի հետ գործընթացները: Սակայն Թուրքիան պետք է հասկանա, որ Հայաստանի համբերությունը հավերժ չէ, ու հնարավոր է, որ Երեւանը փոխի առանց նախապայմանների քաղաքականությունը՝ դառնալով ավելի պահանջկոտ», ընդգծեց Ռիչարդ Կիրակոսյանը:**

**Հ. Ա.**

# Մամուլի ազատության ցուցիչը բարձրացրել ենք, իսկ բովանդակությո՞ւնը

**Ըստ «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային կազմակերպության հրապարակած զեկույցի՝ մամուլի ազատության 2011 թվականի տարեկան վարկանշային աղյուսակում Հայաստանը բավական բարձր աստիճանի է հասել 2010-ի համեմատ՝ 101-րդ տեղից հասնելով 77-րդին եւ 24 կետով բարելավելով մամուլի ազատության ցուցիչը: Սակայն զեկույցը կազմողները նաեւ նշել են, թե լրատվամիջոցները դատական հետապնդումների եւ ֆինանսական մեծ տուգանքների են ենթարկվում, որոնք գրաքննության ենթարկելու եւ լրատվամիջոցների աշխատանքին միջամտելու եղանակ են:**

**Ըստ «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության՝ հայկական ԶԼՄ-ներում վիճակը կայունացել է 2008-ից հետո, սակայն դատական գործերն ու հետապնդումները շարունակում են խոչընդոտել անկախ լրատվամիջոցների գոյությանը հատկապես՝ մամուլը հիմա էլ գրաքննել փորձելով դատական ճնշումների տեսքով: Դատական հայցերը մեծ մասամբ ներկայացրել են քաղաքական գործիչները: Օրինակ են բերվում Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ նրա ընտանիքի հայցերն ընդդեմ լրատվամիջոցների: Այնուամենայնիվ «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը, որն իր տվյալները սովորաբար ի մի է բերում տեղի ունեցած ու հրապարակված փաստերի հիման վրա, Հայաստանին մամուլի ազատության առումով դարձրել է տարածաշրջանային առաջատար, քանի որ Վրաստանի ցուցիչը 104 է (2010-ին՝ 100-րդ տեղում էր), իսկ Ադրբեջանինը՝ 162 (152-րդն էր 2010-ին), Իրանը 175-րդ հորիզոնականում է հայտնվել՝ իր հին տեղը պահպանելով, նահանջել է նաեւ Թուրքիան:**

**Իհարկե, այս բարենպաստ ցուցիչը Հայաստանի համար դեր կխաղա միջազգային քաղաքական եւ տնտեսական գնահատականների տեսակետից, ինչպես նաեւ ընտրություններին նախորդող ժամանակի դիտարկման առումով: Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ մեր ԶԼՄ-ների որակական աստիճանն է շատ ցածր գլորվել, որը խոսքի ազատության գնահատականի առումով, ճիշտ է, նշանակություն չունի՝ միջազգայիններին դա չի հետաքրքրում, սակայն ընդհանուր մթնոլորտի եւ տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացների վրա ազդեցություն ունի. մեր լրատվամիջոցների մեծ մասը դարձել են մեկը մյուսին նմանակող, մեկը մյուսից արտասպող նույն լրահոսի տարատեսակություններ, որոնց անվանական բազմազանությունը ամենեւին հակադարձ համեմատական չէ բովանդակային նմանությանը: Բացի դրանից՝ այս երկու տարին չափազանց զարկ տված ասուլիսային լրատվությունը աճեցրել է իսկական լրագրության պահանջներին չհամապատասխանող լրագրություն եւ լրագրողների մի ողջ սերունդ, այդպիսով արգելակելով լրագրության զարգացումը մեզանում եւ հետ թողնելով արդի լրագրության աշխարհում ընդունելի ընդհանուր մակարդակից: Այս բոլորն առանձին խոսակցության նյութ է, սակայն, որը մամուլի ազատության այս տարվա ցուցանիշի մասին զրույցներում, եւ ամեն առիթով, հուսով եմ, լրատվամիջոցների ղեկավարները բարձրացնում են եւ պիտի բարձրացնեն, այլապես ամիսն ամսվա վրա մեր լրագրության պատկերն ավելի տխուր ու դժգույն է դառնում՝ չնչին բացառություններով:**

**Մ. Խ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

## Սուրբ Նշան, թե՞ «Սուրբ Նիկողայոս»

### *Եկեղեցում հրդեհով ուշացած «մտահոգությամբ» վրաց պատրիարքարանը կրկին հիշել է Լոռվա «վրացականը»*

Հայկական եկեղեցիները վրացականներից տարբերելու համար առավել հաճախ առաջին իսկ հայացքը բավարար է, թեեւ կան բացառություններ, երբ ակնհայտ են նմանությունները: Թբիլիսիի Սուրբ Նշան եկեղեցու տարածքում նույն վրացական իշխանությունների թողտվությամբ տեղադրված ցուցանակն այն չի անվանում Սուրբ Նիկողայոս, ինչպես հավակնում է ներկայացնել վրաց եկեղեցին: Սակայն արի ու տես, որ հավակնությունները մշտապես կարող են հենվել դատարկ փաստարկների վրա, իսկ ակնհայտ փաստերը՝ անտեսվել:

Ակնհայտ փաստերն անտեսելու ճանապարհով է փորձում գնալ վրաց պատրիարքարանը, որի զգալի կարողության ու դերակատարության մասին Վրաստանում խոսելն ավելորդ է: Վրաց եկեղեցին շատ հարցերում առավել ազդեցիկ է, քան ռացիոնալության վրա հիմնված որեւէ փաստարկ բերող քաղաքական գործիչ կամ բարձրաստիճան պաշտոնյա: Եվ երբ հայկական եկեղեցիների հանդեպ հավակնություններ է արտահայտում վրաց եկեղեցին, ամենայն հավանականությամբ, հետեւորդների զգալի բանակ կարող է այդ հարցում ապահովել:

Այսքանը թերեւս պարզ է, բայց հասկանալի չէ, թե պետության հաշվեկշռում գտնվող եկեղեցիների հարցում ինչու է վրաց պետությունից առաջ ընկնում վրացական եկեղեցին, երբ պահանջներ է ներկայացնում հայկական կողմին, ընդ որում, ոչ միայն թիֆլիսյան եկեղեցիների, այլեւ հայաստանյան որոշ հոգեւոր կառույցների նկատմամբ:

Ավելին, անհասկանալի է, երբ հարցին գրեթե անտեղյակ մարդիկ ու գործիչներ ներկայացողներն էլ մեկնաբանություններ են անում, թե թող հայ եւ վրաց եկեղեցիներն իրենք որոշեն խնդիրը: Երեւի նման դատողությունների տեր մարդկանց համար ուրիշի գույքը տնօրինելու փորձերը շատ նորմալ են, մինչդեռ նախ վրաց պետությունը պետք է որոշի իր վերահսկողության տակ գտնվող ու ավերման շեմին կանգնած եկեղեցիների սեփականության հարցը, որն, ի դեպ, ինչպես նշել էր «**Ազգը**», ակնհայտ է՝ այդ կառույցների վիճակի հարցում մտահոգ ու անհանգիստ միայն մեկ՝ հայկական կողմի առկայությամբ:

Հերթական անգամ վրաց եկեղեցու հավակնությունների մասին պատրիարքարանը հիշեցրել էր դեռեւս նախորդ շաբաթավերջին, Սուրբ Նշանում տեղի ունեցած հրդեհից մոտ երկու շաբաթ անց, մի հայտարարություն տարածելով, թե «այդ փաստը մեզ մտահոգում է»:

Շատ հետաքրքրական է, երբ դեպքից տասն ու ավելի օր հետո պատրիարքարանը նոր է «ցավում» պատահածի համար, բայց հայտարարությունը մատնացույց է «մտահոգության» իրական պատճառներն ու թե ինչու է լույս ընկել հայտարարությունը: «Եկեղեցում նախ անհրաժեշտ է անցկացնել ամրացման աշխատանքներ, ապա ձեւավորել համատեղ հանձնաժողով, որը հնէաբանական ուսումնասիրություններ ու համապատասխան եզրակացություն կանի: Դրան պետք է մասնակցեն ինչպես վրաց պատրիարքարանի, այնպես էլ հայկական կողմի ներկայացուցիչները, որպեսզի անկողմնակալ որոշեն տաճարի ծագումն ու հետեւաբար նաեւ պատկանելության հարցը», ասվում է հայտարարության մեջ:

«Վիճահարույց», բայց հայկական մյուս եկեղեցիների ուսումնասիրությունից հետո միայն, ըստ հայտարարության, «պետք է վրաց եկեղեցուն հանձնվեն Հայաստանի Լոռի-Տաշիրի թեմի եկեղեցիները, իսկ հայկական կողմին՝ Վրաստանում գտնվողները»: Ինչպես ասում են, եթե ուզել՝ ապա ամբողջը...

Ամեն դեպքում, հստակ է, որ հայկական կողմն առավել մտահոգ է նախ հենց եկեղեցիների վիճակի առնչությամբ, այլ ոչ թե ամեն առիթով բարձրացնում է դրանց պատկանելության հարցը, իսկ վրաց եկեղեցու համար այդ եկեղեցիները նախ վրացականացնելու ենթակա կառույցներ են, իսկ եթե ոչ այդպես, ապա դրանք կթողնվեն ժամանակի ու պատահական-դիտավորյալ հրդեհների եւ այլ միջադեպերի ավերածությանը, ինչպես արդեն իսկ արվել է Սուրբ Կարմիր Ավետարանի հետ, ինչպես անգամ պղծելով շիրիմները, ընդ որում նաեւ վրացիների՝ փորձ է արվում իրագործել Սուրբ Նորաշենի դեպքում: Իսկ Մուղնեցոց Սուրբ Գեւորգի փլուզումից հետո, եթե հայերը չհիշեն կրկին այդ մասին, մոռացության գիրկը կանցնի և՛ եկեղեցու գոյության, և՛ դրա հայկական լինելու փաստը:

Քանի դեռ այս հարցը չի բարձրացվել շատ ավելի բարձր ատյաններում, քանի դեռ այս եկեղեցիները մնում են «վիճահարույց», առավել հավանական ճակատագիրը ավերումն ու մոռացությունն են, հատկապես որ արդեն որերորդ անգամ վրաց պատրիարքարանը ոչ միայն իր անունից է պահանջատեր ներկայանում հայաստանյան եկեղեցիների հանդեպ, այլեւ, ինչպես դեռեւս 2011-ի հուլիսին վրաց եկեղեցու սինոդն էր որոշել՝ կոչ է անում պետությանը ակտիվացնել «քայլերը»՝ վրաց եկեղեցուն այդ հարցում օգնելու համար: Իսկ որ վրաց պատրիարքարանը դանդաղորեն, բայց համառությամբ առաջ է տանում իր մոտեցումները՝ կասկածի տեղիք չի կարող տալ:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստրասբուրգ

ԸՆԴԴԵՄ «ՈՒՂԵՂՆԵՐԻ» ԱՐՏԱՀՈՍՔԻ

## ՀՕՖ-ի օգնությունը գիտնականներին

Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ Արեւելյան թեմի Հայ օգնության ֆոնդի Գիտության եւ կրթության հայկական ազգային հիմնադրամը (ԳԿՀԱՀ) ամփոփեց 2012թ. գիտական դրամաշնորհային մրցույթի արդյունքները: Հաղթողներին հանձնեցին 5000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Մրցույթի նպատակն է կասեցնել մտավոր ներուժի արտահոսքը Հայաստանից եւ խթանել գիտական մտքի զարգացումը:




2012թ. ԳԿՀԱՀ հետազոտական խորհրդին ներկայացված 198 գիտական առաջարկներից գերազանց են համարվել 51-ը, որոնցից ֆինանսավորվել են 25-ը: Հաղթող թեմաներից 10 ֆիզիկայի ոլորտից են, 3-ը՝ աստղագիտության, 3-ը՝ կենսաբանության: Ինչպես նաեւ 1-ական հաղթող բժշկագիտության, ճարտարագիտության, տեխնոլոգիայի, էլեկտրոնիկայի, կենսաբանության եւ հայագիտության ոլորտներից:

Հաղթողներին ընտրում է Նյու Յորքում գործող փորձագիտական հանձնախումբը՝ հիմք ընդունելով աշխարհահռչակ գիտնականների եզրակացությունը:

«Այս տարի հաղթող ճանաչված 16 գիտական խումբ առաջին անգամն է արժանանում դրամաշնորհին: Գիտական այս ծրագրի առանձնահատկությունն այն է, որ չկան թեմաների սահմանափակումներ: 12 տարիների ընթացքում ՀՕՖ-ի դրամաշնորհով ավելի քան 600 գիտական աշխատանքներ տպագրվել են միջազգային ամսագրերում: Սա գալիս է փաստելու ներկայացված աշխատանքների բարձր որակը», ասում է ՀՕՖ-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն **Բագրատ Սարգսյանը**:

**Արեգ Միքայելյանը**, որ արդեն չորրորդ անգամ է հաղթում մրցույթում, կարծում է, որ այս ծրագիրը խրախուսում է երիտասարդներին հաստատվելու գիտության տարբեր ոլորտներում: «Սա իսկապես խթանում է աշխատանքային պայմաններ ստեղծելը, որն էլ իր հերթին կնպաստի աշխատատեղերի ստեղծմանը: Ուրախալի փաստ է, որ տարեցտարի ավելանում է կանանց թիվը: Այսօր գիտական խմբի ղեկավարներից 10 կանայք են», ասում է Բյուրականի աստղադիտարանի գիտնական Արեգ Միքայելյանը:

1988-ի ավերիչ երկրաշարժից հետո Նյու Յորքում ստեղծված Հայ օգնության ֆոնդը իր 23-ամյա պատմության ընթացքում, բացի կրթական ոլորտից, բազմաթիվ ծրագրեր է իրականացրել նաեւ այլ ոլորտներում:

Ընդհանուր առմամբ, աշխատանքային 12 տարիների ընթացքում ՀՕՖ-ի գիտական այս ծրագրի մրցանակին են արժանացել 285 գիտական խմբեր, որոնցում ընդգրկված են եղել 1000-ից ավելի գիտնականներ: Ծրագիր դրամաշնորհային գումարը կազմում է 1մլն 425 հազար դոլար:

ՍԱԹԵՆԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

## Հոսանքազրկել են Նարեկ Հարությունյանին պատկանող ընկերությունը

Երեկ առավոտյանից էլեկտրաէներգիայի համար վճարում չկատարելու պատճառով հոսանքազրկված է սփյուռքահայ ներդրող, «Նարեկացի» արվեստի միության նախագահ Նարեկ Հարությունյանին պատկանող «Ձի էյջ Սթորիջ էնթերփրայզս» ընկերությունը: Ընկերությունը չի կարողացել վճարել էլեկտրաէներգիայի համար, քանի որ 16.01.2012 թ. Շենգավիթի հարկային տեսչության կողմից կալանք է դրվել գույքի, բանկային հաշիվների եւ դրամարկղի վրա՝ դրանով իսկ կաթվածահար անելով ընկերության բնականոն գործունեությունը:

Ընկերության աշխատակիցները պարապուրդի են ենթարկված: Մտավախություն կա, որ եթե այսպես շարունակվի, եւ ընկերությունը չկարողանա բնականոն գործունեությունը շարունակել (կալանքների եւ նման այլ իրավիճակների պատճառով), հարկադրված պարապուրդը կվերածվի գործազրկության, եւ շուրջ 35 ընտանիքները կզրկվեն իրենց հացը վաստակելու հնարավորությունից:

Հիշեցնենք, ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում 20.06.2011 թ. հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով «Ձի էյջ Սթորիջ էնթերփրայզս» ՍՊ ընկերության ղեկավար անձանց կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչություն օրենքով սահմանված հաշվետվություններում, հաշվարկներում եւ հարկման համար հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթերում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի առթիվ:

Նույն ժամանակահատվածում «Ձի էյջ Ստորիջ էնթերփրայզս» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել դատարան՝ վիճարկելով այն ստուգման ակտը, որով ընկերությանն առաջադրվել է շուրջ 111 մլն դրամի հարկային պարտավորություն:

Դատական գործընթացը շարունակվում է, դեռեւս ապացուցված չեն ընկերության դեմ առաջադրված մեղադրանքները, հետեւաբար բացառապես ոչ իրավաչափ գործողություններով Հարությունյանների ունեցվածքի վրա ապօրինի արգելանք կիրառելն ունի երկու նպատակ. Հարությունյանները հրաժարվեն Սեւակ Արծրունու դեմ ներկայացրած հայցից եւ սնանկության վտանգից խուսափելու համար հարկադրված լինեն վճարել հարկային պարտավորությունները՝ գնալով իրենց սեփականությունից հրաժարվելու գործարքին:

Իրադարձությունների նախընթաց դեպքերին ծանոթանալու եւ մանրամասների համար կարող եք նայել հետեւյալ հղումները

http://hetq.am/arm/articles/7974/kalanavor-vats-spyurqahayy-nor-pordzaqar-hayastan-spyurq-haraberutyunnerum.html

http://hetq.am/arm/news/7775/berman-e-entarkvel-narekaci-arvesti-miutyan-nakha-gahy.html

http://hetq.am/arm/news/7825/narek-haru-tyunyany-chi-khusapel-harkayin-partavoru-tyunneric-pastaban-video.html

ՄԱՐԻԱՄ ՄՈՒԴՂՈՒՍՅԱՆ
«Ձի էյջ Սթորիջ էնթերփրայզս» ՍՊ ընկերության մամուլի պատասխանատու

## Թեմայից դուրս

Եթե շահագործվի Թեղուտի հանքավայրը, ինչքանո՞վ կվնասվի տեղի հուշարձաններին: Թեղուտի հնագիտական արշավախմբի ղեկավար **Սուրեն Հոբոսյանը** նշում է՝ Թեղուտի այդ հատվածը բավականին բարեբեր է, ու պեղումների ընթացքում հայտնաբերվել են նույնիսկ 5000 տարվա վաղեմության հուշարձաններ: Ըստ Պարոն Հոբոսյանի՝ հնարավոր չէ հստակ ասել, թե Լոռու մարզի այս հատվածում ինչքան հուշարձաններ կան, որոնք հայտնաբերվում են հնագիտական ու ազգագրական հետազոտությունների արդյունքում: Թե ինչքանո՞վ են վտանգված տեղի հուշարձանները՝ երեկ «Արմաս» ակումբում բանախոսը պատասխանեց. «Իհարկե դրանք վտանգված են, հատկապես նկատի ունեմ բուն հանքավայրի տարածքը՝ Դուքանաձորը»: Իսկ ամենաանորոշ ու ծանր վիճակում են պոչամբարի տարածքում մնացած հուշարձանները, որոնց հարցը, ըստ պարոն Հոբոսյանի, դեռ քննարկման ու լուծման կարիք ունի:

Թե քանի՞ հուշարձան պետք է տեղափոխել, իսկ հնարավո՞ր է դրանց տեղափոխումը, կոնկրետ քանի՞սն են վտանգված, քանի՞սն ունեն պատմամշակութային արժեք, այս հարցերին ի պատասխան Սուրեն Հոբոսյանն ասում է, որ վտանգված է նաեւ Խառատանձորում գտնվող 3-4000 տարվա վաղեմության եւս մի հուշարձան: Իսկ մնացած պատասխանները մեկը մյուսից անորոշ ու խուսափողական էին, ինչը տրամաբանորեն ունի իր բացատրությունները: Նախ պարոն Հոբոսյանը գուցե տեղին նշեց, որ ասուլիսին ներկա պետք է լիներ հուշարձանների պահպանման հարցերով զբաղվող բանախոս, իսկ արշավախմբի ղեկավարի գործը պեղումներն ու հնագիտական հետազոտություններ կատարելն է: Մեր մամուլի ակումբներում, դժբախտաբար, սա առաջին դեպքը չէ, երբ ասուլիսի թեման, բովանդակությունը, բանախոսների մասնագիտությունը չեն առնչվում ու նույնիսկ հակասում են իրար: Ինչպես օրինակ՝ մեր դերասաններից մեկը, որն իրեն հիմա նվիրել է տիկնիկային արվեստին, հրավիրվել էր ասուլիս՝ խոսելու տնտեսական ճգնաժամից, օրերս մի դերասան էլ ակումբներից մեկում խոսում էր քաղաքական զարգացումներից, ի՞նչ արած, ասուլիսի թեման էր այդպիսին: Նման դեպքերում ասուլիսը տեւում է գրեթե մեկ ժամ, ու նշված թեմայից գրելիք չի լինում, փորձում ես հարցերի միջոցով փոխել թեման, դա էլ արդեն դուրս է գալիս ասուլիսային սյուժեից:

Երեկ «Արմաս» ակումբում շուրջ մեկ ժամ ցաքուցրիվ հարց ու պատասխաններ լսելուց հետո միայն իմացա, որ Թեղուտի հնագիտական արշավախմբի աշխատանքները հովանավորում ու արշավախմբի ծախսերը հոգում է «Վալեքս գրուպը». խուսափողական ու անորոշ պատասխանների եւս մի բացատրություն: Ու եւս մի հակասություն. Պարոն Հոբոսյանը նշում է՝ կան վտանգված հուշարձաններ, ընդհուպ պատմամշակութային արժեք ունեցող, բայց միեւնույն ժամանակ ասում է՝ «Վալեքս Գրուպին» պետք չէ հրեշի կերպարանք տալ:

Երեկվա բանախոսներից էր նաեւ բնապահպան-ակտիվիստ Ապրես Զոհրաբյանը, թե նա ի՞նչ կապ ուներ հուշարձանների պահպանության հետ, կարծես ինքն էլ չհասկացավ: Հերթական խառնաշփոթը, որը մեր շատ լրագրողները լուսաբանում են հենց խառնաշփոթի ձեւաչափով, երբ ընթերցողը կամ հեռուստադիտողն այդպես էլ չի հասկանում՝ խոսքը կոնկրետ ինչի մասին էր:

Ի. Պ.

# Orange-ը շարունակում է աջակցությունն աուտիզմով երեխաներին

Երեկ «ԱրԲեՍ» առողջության կենտրոնում Orange հիմնադրամը եւ «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամն ամփոփեցին նախորդ՝ 2011 թվականի ընթացքում իրականացված բարեգործական ծրագրի արդյունքները, որի նպատակն էր աջակցություն ցուցաբերել աուտիզմով երեխաներին, նրանց ծնողներին: Ծրագիրը ներառում էր մի քանի փուլ: Աուտիզմի վաղ հայտնաբերման եւ վաղ միջամտության, ինչպես նաեւ աուտիզմի ախտորոշման նոր մեթոդի ներկայացման եւ ներդրման (CHAT) թեստի նպատակով դասընթացներ անցկացվեցին Երեւան քաղաքի եւ Արարատի մարզի առաջնային բուժսպասարկման օղակի մասնագետների համար: Դասընթացներին ընդհանուր առմամբ մասնակցեցին 160 մանկաբույժներ եւ հոգեբույժներ, 238 մանկավարժ, 30 ծնող, 120 երեխա: Ծրագրի շրջանակներում հունիս-օգոստոս ամիսներին թվով 16 աուտիզմով երեխաներ մայրերի եւ խնամակալների ուղեկցությամբ իրենց ամառային հանգիստն անցկացրեցին Ապարանի լճի ափին գտնվող ամառային առողջարանային ճամբարում: Ծրագրի իրականացման համար Orange-ը հատկացրել էր ընդհանուր առմամբ քսանչորս միլիոն չորս հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր դրամ:



Ծրագրի շրջանակներում Երեւան հրավիրվեցին երկու շվեյցարացի մասնագետներ՝ ԱԴՈՍ («Աուտիզմի զննման/գնահատման ախտորոշիչ ցանկ») մեթոդը Հայաստանում ներդնելու նպատակով: Այն աշխարհում ճանաչված է որպես աուտիզմի «Ոսկե Ստանդարտ»: Այս մեթոդը (ADOS Autism Diagnostic Observation Schedule) նախատեսված է օգնելու աուտիզմի սպեկտրի խանգարումների ախտորոշմանը: Դասընթացներին մասնակցեցին ԱրԲեՍ առողջության կենտրոնի մարզային մասնաճյուղերի մասնագետները, ինչպես նաեւ Երեւան քաղաքի հոգեբույժները, մարզային կենտրոնների նեղ մասնագետներ: «ԱրԲեՍ» ԱԿ-ում ծնողների ներկայությամբ իրականացվել է ADOS-ի կիրառմամբ կասկածելի դեպքերի ախտորոշման հաստատումը: Յուրաքանչյուր դեպք նկարահանվել է եւ քննարկվել կենտրոնների մասնագետների հետ:

Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչության հետ սերտ համագործակցությամբ աուտիզմի վերաբերյալ իրազեկման երկօրյա դասընթացներ անցկացվեցին Երեւան քաղաքի մի շարք դպրոցներում ու մանկապարտեզներում, Արարատի մարզի դպրոցների եւ մանկապարտեզների մանկավարժների, Արտաշատի երկու դպրոցի աշակերտների եւ մանկապարտեզի դաստիարակների, երեխաների եւ ծնողների համար: Դասընթացները նպատակ ունեին ուսուցիչներին եւ դաստիարակներին առավել ամբողջական ներկայացնել եւ տեղեկացնել աուտիզմին բնորոշ նշաններին, առաջացման պատճառներին, տարածվածությանը, մասնավորապես պատկերացում տալ աուտիզմով երեխաների հոգեբանական բնութագրի, նրանց բնորոշ հետաքրքրությունների, ուշադրության, ընկալման եւ մտածողության յուրահատկությունների մասին:

«Աուտիզմը մի հիվանդություն է, որ վնասում է մարդու հաղորդակցման ունակությունները: Orange-ը, լինելով հեռահաղորդակցության ընկերություն, իր հոգատարությունն է ցուցաբերում հասարակության այն անդամների նկատմամբ, ովքեր հաղորդակցման խնդիրներ ունեն: Ֆրանս Տելեկոմը ներգրավված է աուտիզմի ոլորտում արդեն 20 տարի ի վեր: Ուրախ ենք այս համագործակցության համար Հայաստանում, որն արդեն երկու տարվա պատմություն ունի: Հայաստանում մենք գտել ենք իրենց գործին տիրապետող մասնագետների, որոնք բազմաթիվ տարիների փորձ ունեն», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**:

Ծրագիրն իր շարունակությունը կունենա նաեւ 2012 թվականին, որն այս տարի ոչ միայն կներառի վերապատրաստման դասընթացներ ուսուցիչների, բժիշկների ու աուտիզմով երեխաների ծնողների համար, այլ նաեւ ավելի ընդգրկուն կլինի: Մասնավորապես Երեւանում կիրականացվի պիլոտային նախագիծ պոլիկլինիկաներից մեկի հետ՝ ներառելով հանրային առողջապահության առաջնային օղակի մասնագետներին, որոնց դերը աուտիզմի վաղ հայտնաբերման գործում անհնար է գերագնահատել: Ծրագիրը նաեւ նախատեսում է համագործակցություն Ֆրանսիայի լիցեյներից մեկի հետ, որն ունի բազմաթիվ տարիների փորձ՝ դեռահասների մասնագիտական կրթության ներդնման եւ աուտիզմով երեխաների մոտ ինքնուրույնության ձեւավորման հարցում:

# ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Վալենտին Սոբոլեւին

ԱԱԽ քարտուղար **Արթուր Բաղդասարյանն** ընդունել է Ռուսաստանի Դաշնության Անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալ Վալենտին Սոբոլեւի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նախորդ տարեվերջին Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության անվտանգության խորհուրդների միջեւ ստորագրված համագործակցության 2012-2013 թթ. ծրագրում ներառված հարցերի լայն շրջանակ:

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը գոհունակությամբ նշել է, որ համագործակցության ծրագրով նախատեսված միջոցառումները ըստ սահմանված ժամանակացույցի արդյունավետորեն իրականացվում են, եւ այս համատեքստում կարեւորել է ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշեւի՝ Հայաստան կատարելիք առաջիկա այցը:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են սահմանային անվտանգության ոլորտում համագործակցության ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը, այդ թվում՝ սահմանային անցակետերի արդիականացման եւ վերազինման, ինչպես նաեւ սահմանապահների վերապատրաստման համատեղ ուսումնական կենտրոնի ստեղծմանն առնչվող հարցեր: Անդրադարձ է եղել նաեւ արտակարգ իրավիճակների ոլորտում համատեղ ծրագրերի իրականացմանը, ռազմարդյունաբերության ոլորտում համագործակցության ընթացքին վերաբերող այլ հարցերի, ինչպես նաեւ քննարկվել է ՀԱՊԿ տեղեկատվական կենտրոնների ստեղծման նախաձեռնությունը:

Վալենտին Սոբոլեւն ընդգծել է երկու երկրների անվտանգության խորհուրդների միջեւ համագործակցության բարձր մակարդակը եւ վստահություն հայտնել, որ բոլոր միջոցառումները լիարժեք կյանքի կկոչվեն համագործակցության ծրագրով նախատեսված ժամանակացույցի համաձայն:

# Քննարկվեցին պարենային անվտանգության հարցեր

ԱԱԽ քարտուղար **Արթուր Բաղդասարյանն** ընդունել է Համաշխարհային բանկի պարենի ապահովման ծրագրերի ներկայացուցիչ Ջուզեպպե Ֆանտոզիին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում պարենային անվտանգության ապահովմանը, ինչպես նաեւ այս ոլորտում միջազգային համագործակցությանն առնչվող հարցեր:

Արթուր Բաղդասարյանը նշել է, որ համապատասխան միջգերատեսչական հանձնաժողովի կողմից միջազգային փորձի ուսումնասիրությամբ մշակվել է ՀՀ պարենային անվտանգության հայեցակարգը, որի հիման վրա կառավարությունը մշակել է ծրագիր: ԱԱԽ քարտուղարը կարեւորել է այս աշխատանքներում համաշխարհային փորձի եւ միջազգային լավագույն պրակտիկայի կիրառումը:

Ջուզեպպե Ֆանտոզին պատրաստակամություն է հայտնել շարունակական համագործակցություն ծավալել Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի՝ պարենային անվտանգության հարցերով ստորաբաժանման հետ՝ փորձի եւ արդի զարգացումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով:

# Կմնանք 4-րդ ժամային գոտում

*Առաջիկայում 3-րդ ժամային գոտի տեղափոխվելու հեռանկարով*

Ինչպես նշել էինք մեր նախորդ համարում, կառավարությունը երեկ հավանություն տվեց ժամային գոտիներին առնչվող փոփոխությանը, համաձայն որի՝ այս տարվա գարնանը այլեւս անցում չենք կատարի ամառային ժամանակի, մնալով Գրինվիչից հաշվարկած 4-րդ ժամային գոտում: Այդ կապակցությամբ էկոնոմիկայի նախարար **Տիգրան Դավթյանը** լրացուցիչ պարզաբանումներ տվեց լրագրողներին:

Էկոնոմիկայի նախարարը հայտնեց, որ անցյալ դարի 30-ական թվականներին ամբողջ Խորհրդային Միությունում ժամացույցի սլաքը մեկ ժամ առաջ տարվեց եւ Հայաստանը հայտնվեց 4-րդ ժամային գոտում: Դրանից հետո, երբ մտցվեց անցումն ամառային եւ ձմեռային ժամանակի, Հայաստանը, ամառային ժամանակին անցնելով, 7 ամիս գտնվում էր 5-րդ ժամային գոտում: Այսինքն, իր իրական ժամանակային գոտուց 2 ժամվա տարբերության գոտում էր գտնվում: Այս իրավիճակը փոփոխելու համար, ըստ Տիգրան Դավթյանի, կառավարությունը այս պահին որոշել է դադարեցնել անցումը ամառային ժամանակի, մնալով 4-րդ ժամային գոտում տարվա բոլոր ամիսներին: Սակայն ապագայում, նախարարի կարծիքով, 1-3 տարի հետո, եւս 1 ժամի տեղափոխություն կկատարենք եւ կտեղափոխվենք մեր բնական՝ 3-րդ ժամային գոտին: «Բայց դա կլինի հետո, ասեմ միայն, որ 1 ժամ ավելի ուշ ենք զարթնելու, որից ոչ ոք չի դժգոհի», ավելացրեց նա:

**«Ազգի»** հարցերից առաջինն այն էր, որ երկար ժամանակ բնակչությունը, մասնագետները, լրատվամիջոցները քննադատում էին տարին 2 անգամ ժամացույցի սլաքի փոփոխությունները, ներկայացնում դրա բացասական հետեւանքները, ինչո՞ւ կառավարությունն այդքան ուշացումով կատարեց այդ քայլն ու արդյո՞ք դա կապված էր Ռուսաստանի կողմից նույն քայլն անելու հետ: Տիգրան Դավթյանն ասաց, որ հարցեր կան, որ պետք է որոշել եւ լուծել: Սա դրանցից մեկն էր: Բացի դրանից, ըստ նախարարի, այս խնդիրն առնչվում էր շատ այլ խնդիրների՝ ինքնաթիռների թռիչքներ, չափագիտական, տնտեսական գնահատականներ: Այս ամենը վերլուծելուց եւ պարզելուց հետո կայացվեց վերջնական որոշումը: Հայաստանը գտնվելու է իր առեւտրատնտեսական հիմնական գործընկերների՝ Ռուսաստանի, Վրաստանի հետ նույն ժամային գոտում, Եվրոպայից 1 ժամվա տարբերությամբ, ինչը շահավետ է առողջապահական, տնտեսական, զբոսաշրջության եւ առումներով:

Մեր մյուս հարցն այն էր, թե նախկինում ժամային փոփոխությունը կատարում էին այն հիմնավորմամբ, թե դա էներգետիկ մեծ ռեսուրսներ է խնայում, հիմա էներգետիկ մեծ ծախսեր չե՞ն լինի: Էկոնոմիկայի նախարարը պատասխանեց, որ էական էներգախնայողություն չէր լինում, նման կորուստներ չեն լինի, Հայաստանն էլ էլեկտրաէներգիայի պակասորդ չունի:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Ըստ Կարինե Հակոբյանի՝ Ազգային ժողովը վերմակ չէ, որ ամեն մեկն իր շահերի կողմը քաշի

«Ժառանգություն» կուսակցության վարչության քարտուղար **Կարինե Հակոբյանը**, երեկ լրագրողների հետ հանդիպելով, մի քանի արժանահիշատակ արտահայտություններ է արել: Նրան մտահոգել է հատկապես այն հանգամանքը, որ ընտրությունների մոտենալուն զուգահեռ Հայաստանի քաղաքական դասին եւ ընտրական գործընթացներին հատուկ արատներն ավելի են խորանում, եւ խոստումները (այդ թվում՝ նախագահ Սարգսյանի), թե այս ընտրություններն ավելի արդար են լինելու, առայժմ գործի չեն վերածվում: Նա մի պատկերավոր համեմատություն է արել՝ քաղաքական դաշտը միթեւանի դեւի նմանեցնելով, այդ մեկթեւանուն էլ իշխանության հետ նույնացնելով: Բնականաբար՝ նա իշխանություն է համարել ողջ կոալիցիային, քանի որ չի հավատում նրա երկու մեծ կուսակցությունների իբր հակադրություններին: Հակադրվելով Ռաֆիկ Պետրոսյանի այն մտքին, թե գործարարը պետք է լինի խորհրդարանում, որ իր շահերը պաշտպանի, Կ. Հակոբյանը պրոյեկտում է տրամաբանությունը՝ ուրեմն կոշկակար էլ պիտի լինի, որ կոշկակարների շահերը պաշտպանի եւ այլն: Ազգային ժողովը վերմակ չէ, որ ամեն մեկը քաշի իր շահերի կողմը: Բայց Կ. Հակոբյանը հույսը չի կորցնում եւ հույս է դնում հասարակության մասնակցությամբ փոփոխությունների վրա: «Ժառանգության» ցուցակը եւ այլ միավորների հետ դաշինք կազմելու հանգամանքը, ըստ կուսակցության վարչության քարտուղարի, մոտ մեկ ամիս հետո կպարզվի:

Մ. Խ.

# ԲՀԿ-ն միանում է «Ժառանգության» եւ ՀՅԴ-ի՝ լսումների վերաբերյալ առաջարկին

«Ժառանգության» ու ՀՅԴ-ի նախաձեռնությանը՝ դիմելու Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովներ՝ 100 տոկոս համամասնական ընտրակարգին անցնելու վերաբերյալ խորհրդարանական լսումներ կազմակերպելու, երեկ միացել է նաեւ ԲՀԿ-ն: Հավանաբար լսումները կամ պետք է մոտեցնեն տեսակետները, կամ, ընդհակառակը, հեռացնեն, ու դրանից հետո պարզ կլինի՝ ՀՅԴ-ն ու «Ժառանգությունը», այնուամենայնիվ, մենա՞կ են մնում իրենց նախաձեռնության մեջ, թե՞ այդ նախաձեռնությունը որոշ հեռանկար ունի:

Մ. Խ.

# Հաճույքով շնորհավորում եմ

## *Բաց նամակ Ռուստամ Իբրահիմբեկովին*

Turan գործակալությունը տարածել է ձեր «դիմումը»: Դուք ասում եք, որ Ֆրանսիայի Սենատի ընդունած օրենքը քրեական հետապնդում է սահմանում «այսպես կոչված «հայոց ցեղասպանությունը» ժխտելու համար այն դեպքում, երբ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, 1915թ. տեղի ունեցած ողբերգական դեպքերը համաշխարհային գիտական ընկերակցության կողմից մեկնաբանվում են տարբեր կերպ եւ միջազգային մակարդակի դատական համապատասխան որոշում չունեն»: Զգիտեմ, գուցե գործակալությունն է աղավաղել ձեր միտքը, մեջբերում եմ ըստ Contact..az-ի տարածած ռուսերեն տեքստի եւ, անկեղծ ասած, չեմ հասկանում, թե հիշյալ «ողբերգական դեպքերն» ի՞նչ «միջազգային մակարդակի որոշում» կարող էին ունենալ, որ չունեն: Գուցե նկատի եք ունեցել, որ դրանք միջազգային դատարանի կողմից չե՞ն դատապարտվել:

Սխալվում եք, դատապարտվել են: Այն էլ՝ թուրքական դատարանի կողմից: Դուք չե՞ք ընդունում այդ դատարանի օրինականությունը, գտնում եք, որ այն վճիռ է կայացրել Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությա՞ն պայմաններում: Բայց մի՞թե Նյուրնբերգը կայացել է Երկրորդ համաշխարհային պատերազմում պարտված Գերմանիայի նախաձեռնությամբ: Ամենեւին, մարդկության դեմ ֆաշիզմի գործած հանցանքների համար Երրորդ ռայխի պարագլուխներին դատել են նույնպես հաղթած երկրները:

1919 թ. Կոստանդնուպոլսում, այո, թուրքական դատարան է ստեղծվել Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած երկրների պահանջով: Բայց դա քմահաճույք չէր: Քանի որ դեռեւս 1915 թ. մայիսին Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի կառավարությունները հանդես էին եկել համատեղ հայտարարությամբ եւ միջազգային հանրությանն իրազեկել, որ պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո այդ երկրի իշխանությունները պատասխան են տալու հայ ժողովրդի դեմ գործած հանցանքի համար:

Ինչ վերաբերում է «համաշխարհային գիտական հանրության կողմից դեպքերի տարբեր մեկնաբանություններին», ապա ձեր մակարդակի մտավորականը, որ իրեն նվիրել է նաեւ այդ հարցի «ուսումնասիրությանը», պետք է վաղուց համոզված լիներ, որ ոչ թուրք որեւէ պատմաբան կասկածի տակ չի առնում օսմանյան կառավարության կողմից Թուրքիայի հայազգի քաղաքացիների հանդեպ գործադրած բռնությունների, ջարդերի եւ զանգվածային տեղահանության փաստերը:

Կարծիքները բաժանվում են միայն աղետի չափերի հարցում: Ոմանք զոհերի թիվը հաշվում են 700-800 հազար, դեպքերի ականատես գերմանացի Լեփսիուսը՝ շուրջ մեկ միլիոն: Թվում է, պետք է հասկանալի լինի, որ այլ բան է փաստի, բոլորովին ուրիշ՝ աղետի չափերի շուրջը «տարբեր մեկնաբանությունները»: Ըստ որում, դրանից ոչինչ չի փոխվում: Իրականությունն այն է, որ մինչեւ 1915թ. Թուրքիայում ապրել է երկուսուկես միլիոն հայ: Ներկայիս Թուրքիայի հանրապետությունում հայկական համայնքը հաշվվում է 50-60 հազար մարդ, այն եւս՝ գերազանցապես Կոստանդնուպոլսում:

Չեք կարող «հեծանիվ հնարել»: Թուրքիայում Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուն օսմանյան կառավարության գործողությունների նպատակ համարել է «էթնիկական բնաջնջումը»: 1915թ. «ցեղասպանություն» տերմինը դեռ հայտնի չէր: Ֆաշիզմը ծնվել է պանթուրքիզմից մի փոքր ուշ: Բայց Հիտլերը, Գեբելսը եւ մյուսները Թալեաթի, Էնվերի, Ջեմալի կաթնեղբայրներն են:

Ես այսօր՝ 2012թ. հունվարի 25-ին սարսափով կարդացի ադրբեջանցի քաղաքագետ Զաֆար Գուլիեւի մտավարժանքներն այն մասին, թե խոսքի ազատությունը եւ պլյուրալիզմը պետք է տարածել նաեւ Հոլոքոստի ժխտման՝ ինդիվիդումի իրավունքի վրա: Նույնն եք ասում նաեւ դուք: Բայց միայն՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ:

Դուք գրում եք, որ ֆրանսիական օրենքը վիրավորում է բոլոր թուրքերի արժանապատվությունը: Ամեն ինչ ասված է: Անկեղծության համար՝ շնորհակալություն: Իսկ դեմագոգիայի համար, որ բոլոր թուրքախոս ժողովուրդներին «մկրտում եք» պանթուրքիզմի ավազանում, կարծում եմ, ձեզ պատասխանատվության կհրավիրեն թուրքախոս այն հանրությունները, որ խելամտորեն չեն մտնում օսմանյան կառավարության գործած հանցանքի ծանրության տակ:

Ռուստամ Իբրահիմբեկովը չէր պանծացնում Ֆրանսիան: Այդ երկիրը մեծությունների կարիք չունի, բայց ֆրանսիական շքանշանը, որից հրաժարվել եք, զարդարում էր ե՛ւ ձեզ, ե՛ւ աշխարհի բոլոր ադրբեջանցիներին: Դուք կատարել եք ճիշտ ընտրություն. քանի որ Ֆրանսիան իրեն թույլ չէր տա ձեզ զրկել շքանշանից, ինքներդ եք մերկացրել «արվեստագետի» ձեր բուն էությունը եւ նույնացել երիտթուրք դահիճների հետ: Այդ առթիվ ձեզ միայն շնորհավորել կարելի է, ինչը եւ անում եմ հաճույքով:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# «Ֆուկուշիմա-1»-ի օպերատոր ընկերությունը ազգայնացվում է



Ճապոնական «Ֆուկուշիմա-1» վթարված ատոմակայանի օպերատոր ընկերություն Tepco-ն անցնում է պետության վերահսկողության տակ, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Գործարքի պայմանների համաձայն, կառավարությունը Tepco-ին կհատկացնի ֆինանսական օգնություն (1 տրիլիոն իեն կամ 12,8 միլիարդ դոլար), փոխարենը ստանալով ընկերության բաժնետոմսերի 2/3-ը: Ազգայնացման ծրագրի իրականացումից առաջ դրան պետք է հավանություն տան ընկերության բաժնետերերը հունիսին կայանալիք տարեկան ժողովում:

Tepco-ի ազգայնացումը ընկերության ֆինանսական առողջացման ծրագրի մի մասն է: Nikkei գործակալությունը հաղորդում է, որ ըստ ծրագրի Tepco-ն բանկային վարկերի ձեւով կստանա եւս 1 տրիլիոն իեն: Ենթադրվում է, որ այդ միջոցառումների շնորհիվ ընկերությունը 2014-ին կստանա առաջին շահույթը, իսկ մինչեւ 2018-2019 թթ. դուրս կգա պետության վերահսկողությունից: Ճապոնական այլ լրատվամիջոցներ հաղորդում են, որ Tepco-ն պետության վերահսկողության տակ կմնա մոտ 10 տարի:

Tepco-ն Ճապոնիայի խոշորագույն էներգետիկական ընկերություններից մեկն է եւ էլեկտրաէներգիայով ապահովում է 45 մլն սպառողների, այդ թվում՝ Տոկիոյում: 2011-ի մարտյան երկրաշարժն ու ցունամին վթար առաջացրին «Ֆուկուշիմա-1» ԱԷԿ-ում, որի օպերատորն է Tepco-ն: Վթարի հետեւանքով Tepco-ի կրած կորուստները գնահատվում են 4,5 տրիլիոն իեն (գրեթե 60 մլրդ դոլար):

Վթարից հետո որոշվեց շահագործումից հանել «Ֆուկուշիմա-1»-ը: Նախնական հաշվարկների համաձայն, կայանի աշխատանքի ամբողջական դադարեցման համար կպահանջվեն առնվազն 30 տարի եւ 19 մլրդ դոլար:

ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

# Չինաստանը խստիվ դատապարտեց ԵՄ հակաիրանական բեռնարգելքը

## *Էներգակիրների կայուն աղբյուրների կարեւորությունը*

**Չինաստանը խստիվ քննադատել է իրանական նավթի ներմուծումն արգելելու Եվրոմիության որոշումը: Կողմերին բանակցության կոչ անելով՝ Պեկինը ընդգծել է, որ պատժամիջոցների խստացումը կունենա անչափ բացասական հետեւանքներ:**

**«Կուրորեն ճնշում գործադրելը եւ նորանոր պատժամիջոցներ ձեռնարկելը չի նպաստակում կառուցողական ելք փնտրել», ասվում է ՉԺՀ ԱԳՆ հայտարարության մեջ: Իրանի հարցում Պեկինը եւ Մոսկվան ավանդաբար հանդես են գալիս զսպվածության դիրքերից:**

**ՉԺՀ-ն իրանական գազի խոշորագույն ներմուծողն է: Իրանից արեւմտյան կապիտալի դուրսբերման պայմաններում դրան փոխարինում են չինական ընկերությունները: Էներգակիրների մատակարարման ասպարեզում Պեկինի եւ Թեհրանի կնքած պայմանագրերի ընդհանուր գումարը 40 մլրդ դոլար է:**

**Չինաստանը նաեւ Իրանի գլխավոր առեւտրական գործընկերն է: ՉԺՀ-ում Իրանի դեսպան Մեհդի Սաֆարիի խոսքերով՝ 2011-ին երկկողմ առեւտրաշրջանառությունն ավելացել է 55 տոկոսով, հասնելով 45 մլրդ դոլարի: Ֆրանսպրեսը մեջբերում է բազմաթիվ վերլուծաբանների այն կարծիքը, թե ԵՄ նոր պատժամիջոցները կհանգեցնեն ՉԺՀ-Իրան կապերի հետագա ամրապնդմանը: «Ուոլ սթրիթ ջորնըլ» թերթը նշում է, որ արընթացորեն զարգացող ՉԺՀ տնտեսության համար էներգակիրների կայուն աղբյուրներն ավելի կարեւոր են, քան Իրանի հարցում ԱՄՆ-ի հետ փոխգործողությունը:**

**Ենթադրվում է, որ հենց չինական շուկայում կհայտնվի օրական 450 հազար բարել այն նավթը, որից հրաժարվեց Եվրոպան: Նավթի առեւտրի եկամուտները կհարստացնեն Իրանի գանձարանը, իսկ չինական ընկերությունները կամրապնդեն իրենց դիրքերը համաշխարհային շուկաներում:**

# Եգիպտոս. Արքաների հովտում գտել են երգչուհու դամբարան



Արքաների հովտում հնագետներն առաջին անգամ հայտնաբերել են ոչ արքայական դամբարան: Դրա ներսում գտել են մումիայով սարկոֆագ: Հիերոգլիֆները թարգմանելով՝ գիտնականները պարզել են, որ իրենց առջեւ Նեխմես Բաստետ անունով կնոջ աճյունն է: Մակագրությունը վկայում է, որ նա ավելի քան 3000 տարի առաջ եղել է Կառնակի տաճարի երգչուհի:

ՌԻԱ գործակալությունը մեջբերում է հնագետների խոսքերը, որոնց համաձայն դամբարանը իրենք պեղել էին դեռ 2011-ի սկզբներին, բայց երկրում ծավալված անկարգությունների պատճառով գտածոն գաղտնի էին պահել: Դամբարանը կողոպտիչներից պաշտպանելու նպատակով այն թաքցրել էին մետաղյա հաստ սալի տակ: Արքաների հովտում վերջին անգամ դամբարան հայտնաբերվել էր 1922-ին:

# Հորդանանի թագավորը սպառնում է Իսրայելին



**Հորդանանի Աբդալլահ Բ թագավորը արաբական ԶԼՄ-ներին տված հարցազրույցում վրդովմունք է արտահայտել Իսրայելի դիրքորոշման առնչությամբ, որը հաշտության բանակցություններում չի ուզում զիջումներ անել պաղեստինցիներին: Իսրայելական «Եդիոտ Ահրոնոտ» թերթը գրում է, որ միապետը սպառնացել է ճնշումներ գործադրել Երուսաղեմի վրա:**

**Թերթի տվյալներով, Աբդալլահը հասկացրել էր, որ եթե Իսրայելը չդրսեւորի «որոշ հանդիպական քայլեր կատարելու կարողություն», ապա Հորդանանը քննության կառնի նրա հետ դիվանագիտական հարաբերությունների մակարդակն իջեցնելու կամ դրանք ընդհատելու հնարավորությունը:**

**Բացի դրանից, Ամմանը միշտ ի վիճակի է ամրապնդելու համագործակցությունը ներքին իսլամիստական ընդդիմության հետ եւ կապեր հաստատելու Իրանի հետ: Թե՛ մեկը եւ թե՛ մյուսը մեծ տագնապով կընդունվեն Երուսաղեմում:**

**Հորդանանը տարածաշրջանի վերջին մահմեդական երկիրն է, որի հետ Իսրայելը դեռեւս ունի լիարժեք դիվանագիտական հարաբերություններ: Անցյալում նման երկրների թվում էին Թուրքիան եւ Եգիպտոսը, սակայն 2012-ին երկուսն էլ զանազան պատճառներով սառեցրին դիվանագիտական հարաբերությունները Երուսաղեմի հետ:**

# Հոբելյանական համերգ՝ Նաղաշ Հովնաթանի 350-ամյակին

1661 թ. Շոռոթ գյուղաքաղաքում տեր Հովնան քահանայի ընտանիքում ծնվում է Նաղաշ Հովնաթանը: Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, այնուհետեւ՝ Ագուլիսում: Հոր օրինակով սկզբական շրջանում տաղանի Հովնաթանը զբաղվում էր գրչությամբ եւ մանրանկարչությամբ, միաժամանակ մասնակցելով ժամերգության արարողություններին: Գրչության, մանրանկարչության, բանաստեղծության, երգարվեստի, նվագերգության բնագավառներում նրա կատարած անգնահատելի ներդրումները մեծ են ու նրա թողած ժառանգությունը շատ օգտակար եւ կարեւոր: Բնությունը Նաղաշին պարգեւել էր բազմակողմանի շնորհներ ու մեծ կարողություններ: Ինքն էլ չիմանալով, թե ինչպես ծնվեց իր հռչակն ու տարածվեց: Լուրը հասնելով Թբիլիսի, թափանցեց արքունիք ու գրավեց Վախթանգ 6-րդի ուշադրությունը եւ Նաղաշը հրավիրվեց պալատ: Հետագայում Հովնաթանի մշտական երազանքը՝ վերադառնալ հարազատ Շոռոթ, իրականացավ 1722-ի հոկտեմբերի 28-ին եւ հայրենի հողն իր մայրական գիրկը բացեց կարոտաբաղձ զավակի աճյունի առջեւ:




1961-ի հոկտեմբերին, երբ Շոռոթի վերջին բնակիչները դեռեւս չէին լքել իրենց բնօրրանը, Նաղաշ Հովնաթանի ծննդյան 300-ամյակին նվիրված հանդիսությունների կապակցությամբ Հայաստանի մատենադարանի մի խումբ աշխատակիցներ եղան Շոռոթում եւ կամեցան պսակ դնել տապանին: Որոնումները իզուր անցան: Տարեցները նշել են, որ մինչեւ 1920-ական թվականների վերջերը տապանը պահպանված է եղել, իսկ թե հետո ո՞վ է անհետացրել՝ պարզ չէ: Ինչեւէ, Նաղաշ Հովնաթանի իսկական հուշարձանը նրա թողած ժառանգությունն է: Երեք տասնյակից ավելի սիրո երգեր են հասել մեզ: Նաղաշ Հովնաթանի ամեն մի երգում մի նրբերանգ կա, ներաշխարհը բացահայտելու մի նոր ցոլք՝ իր ներաշխարհը բացահայտելու եւ իրեն գերող գեղեցկուհու բարեմասնությունները դրվատելու: Նա օժտված էր նաեւ երգիծելու կարողությամբ եւ խոհա-խրատական ու երգիծական տաղաչափերի կողքին հատուկ տեղ են գրավում Նաղաշ Հովնաթանի «Այլ տաղեր»:

Հովնաթանին բարձր են գնահատել Ա. Չոպանյանը, Հ. Թումանյանը, Ն. Ակինյանը, Վ. Բրյուսովը, Մ. Աբեղյանը եւ ուրիշներ: Նաղաշ Հովնաթանն իր 100 տաղերով՝ երգիծական, խոհա-խրատական, խնջույքի, սիրո, դարձավ հայ-քնարերգության անվանի ներկայացուցիչը: Միջնադարի մեծ սիրերգակ, հռչակավոր աշուղ, վրաց արքունիքի երգիչ, նկարիչ ու ծաղկող Նաղաշ Հովնաթանը իր հոր հետ նկարազարդել են Էջմիածնի տաճարը, Ագուլիսի, Շոռոթի եւ Վրաստանի բազմաթիվ եկեղեցիների պատերն ու սյուները: Այսօր դրանցից մի քանի որմնանկարներ պահպանվել են:

Եվ ահա «Սայաթ-Նովա» աշուղական կենտրոնի ջանքերով, ինչպես նշում էր պրոֆեսոր **Թովմաս Պողոսյանը** վերջերս, մեկ տարի շարունակ կենտրոնի մասնագետները լուրջ ուսումնասիրել են Նաղաշ Հովնաթանի տաղերը եւ արդեն վերականգնվել է 7 երգ՝ Էլինար Շահենի, Արտեմ Խաչատուրի, Րաֆֆի Հակոբյանի եւ Թովմաս Պողոսյանի կողմից: Դրանք են՝ «Գեղեցիկ պատկեր ես», «Աստված անհաս եւ անքին», «Տաղ սիրոյ», «Պատկեր մի տեսի», «Բաղչի դուռն է բացվել», «Նման ես դու կարմիր վարդի» եւ «Այսօր եղեւ պայծառ արեւ»:

**«Ազգի»** թղթակիցը հրավիրվեց ներկա գտնվելու առաջիկա հոբելյանական համերգի գլխավոր փորձին եւ հիացած ու տպավորված աշուղական անաղարտ երգերի կատարումներից, փորձեց պարզաբանել, թե ինչպես են վերականգնվել երգերը: Թովմաս Պողոսյանը բացատրեց. «Աշուղական արվեստը առանձնահատուկ է նաեւ նրանով, որ նրա խոսքը, տաղաչափությունը, կանոնները, ձեւերը իրենց մեջ ունեն ներքին պայմանականություններ, որոնցից բխում է նաեւ մեղեդին: Ահա այդ կանոններին, ձեւերին տիրապետելով էլ մենք կարողացել ենք հնարավորինս ցանկալի չափով մոտենալ հեղինակի զգացողությանը, մտաշխարհին ու վերականգնել բոլոր լադաինտոնացիոն կառուցվածքները: Մեկ երգ էլ մենք կարողացել ենք վերականգնել ըստ Սայաթ-Նովայի հղումի. «Քանի վուր ջանիմ» երգի տակ Սայաթ-Նովան մեզ հուշում է, որ այդ երգը պետք է երգել Նաղաշ Հովնաթանի «Թասերն չինի» երգի մեղեդիով, որով էլ հնարավոր եղավ վերականգնել այդ երգը»:

Տեղեկացնենք, որ ՀՀ մշակույթի նախարարությունը, «Սայաթ-Նովա» մշակութային միությունը հունվարի 31-ին, ժամը 18:00-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում նախաձեռնել են Նաղաշ Հովնաթանի ծննդյան 350-ամյակին նվիրված հոբելյանական երեկոն: Ծրագրում ընդգրկված են աշուղի երգերը, նաեւ մերօրյա աշուղներ Աստղանուշի, Պարգեւի եւ Նազելիի ձոները Նաղաշ Հովնաթանին: Համերգային ծրագիրը կներկայացնի Հանրային ռադիոյի «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլը՝ ղեկավարությամբ ՀՀ ժող. արտիստ, պրոֆեսոր Թովմաս Պողոսյանի, գործիքային մասի ղեկավարն է ՀՀ վաստ. արտիստ կոմպոզիտոր Արտեմ Խաչատուրը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Լորիս Ճգնավորյանի նկարչական ստեղծագործությունների ցուցահանդես Թեհրանում

**Հունվարի 20-ին Թեհրանի «Շիրին» մշակութային կենտրոնի ժամանակակից արվեստի ցուցասրահում տեղի է ունեցել անվանի երաժիշտ մաեստրո Լորիս Ճգնավորյանի նկարչական ստեղծագործությունների անդրանիկ ցուցահանդեսը:**

**Մաեստրոն, որ համարվում է ժամանակակից Իրանի լավագույն երգահաններից եւ դիրիժորներից մեկը, այս անգամ հանդես էր եկել նոր դերակատարությամբ: Մինչ այդ Ճգնավորյանը երբեք չէր նկարել, ոչ էլ ունի համապատասխան կրթություն: «Ես հավատում եմ, որ նրա նկարները վիզուալ երաժշտություն է, որոնք արձագանքում են հույզերը կտավների վրա: Ճգնավորյանի նկարները ներշնչված են սիմֆոնիաներից, օպերաներից եւ այլ ստեղծագործություններից»,- ցուցահանդեսի բացման ժամանակ ասել է մշակույթի կենտրոնի տնօրեն Շիրին Փարթավին:**

**Ցուցահանդեսի բացման ժամանակ մաեստրոյին շնորհավորել եւ ելույթներ են ունեցել ԻԻՀ մշակույթի եւ իսլամական կողմնորոշման նախկին նախարար Ահմադ Մասջեդ Ջամեին, Թեհրանի քաղաքապետարանի մշակույթի բաժնի պատասխանատուն, արվեստաբաններ, հայտնի նկարիչներ եւ երաժիշտներ:**

**Երաժշտական երկարատեւ գործունեությանը զուգահեռ մաեստրո Լորիս Ճգնավորյանի զգացումներն ու ներաշխարհը այս անգամ ներկայացված էին մի քանի տասնյակ նկարչական ստեղծագործությունների միջոցով, որոնք մեկնաբանում եւ դրսեւորում են մաեստրոյի ֆիլհարմոնիկ նվագախմբի գործիքավորումների երանգներն ու գույները: Նրա վրձնի շարժումները նման են երաժշտական գործիքների ձայների կամ դիրիժորի փայտիկի շարժումների: Ստեղծագործությունների մեծ մասը ներկայացված են երաժշտական գործիքների ու նոտաների տեսքով, ինչով արտացոլված է մաեստրոյի հոգեկան աշխարհը:**

**Մաեստրո Ճգնավորյանը, ցուցահանդեսին ներկա ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության ներկայացուցչին տեղեկացրել է, որ Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ Հայաստանի ցեղասպանության թանգարանին է նվիրելու իր՝ ցեղասպանության թեմաներով նկարած 7 աշխատանքները:**

# Ստեղծվել է հայերեն-ֆրանսերեն էլեկտրոնային բառարան

**2012 թ. հունվարի 25-ին, ք. Բուխարեստում ԵՊԼՀ ռեկտոր պրոֆ. Ս. Զոլյանը եւ Ֆրանկոֆոն համալսարանների ասոցիացիայի (AUF) Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի տարածքային գրասենյակի ղեկավար պրն Աբդուրահման Ռիդան AUF-ի անդամ համալսարանների ներկայացուցիչների եւ AUF-ի աշխատակազմի հետ համատեղ աշխատանքային նիստի ժամանակ ստորագրեցին համաձայնագիր հայերեն-ֆրանսերեն էլեկտրոնային բառարանի ստեղծման վերաբերյալ: ԵՊԼՀ լավագույն ուսանողների ջանքերով կազմվող եւ մասնագետների կողմից մեծ պահանջարկ ունեցող այս բառարանը մատչելի է լինելու բոլորի համար: Նախաձեռնությունն իրականացվում է Ֆրանկոֆոն համալսարանների ասոցիացիայի հետ արդեն բազմամյա եւ սերտ համագործակցության շրջանակներում եւ վերջինիս աջակցությամբ: Հիշյալ անդամակցության շնորհիվ է եւս, որ համալսարանում ստեղծվել է Ֆրանկոֆոնիայի թվայնացված տեղեկատվական կենտրոն՝ միակը հանրապետությունում:**

ԼՈՒՐԵՐ ՆԻՒ ԵՈՐՔԷՆ

# Հայկական ծնունդը եւ կտակը տասը հայ նկարիչներու



Առաջնորդարանի համալիրը սկսած է վերադառնալ անցեալի իր աւանդոյթին՝ դառնալով հայ մշակոյթի կեդրոն նաեւ: Կար շրջան մը, որ Մենհեթընի սրտին վրայ եղող Ս. Վարդան տաճարը իր սրահները բաց էր պահած հայ արուեստագէտներու, ըլլան անոնք գրական, երաժշտական թէ գեղանկարչական բնագաւառներէն եկող: Մշակութային եռուզեռ մը կը տիրէր, երբ գրեթէ ամէն շաբաթ ձեռնարկ մը, հանդիսութիւն մը կը կազմակերպուէր հոն:

Դադարէ մը ետք, դարձեալ կարծէք, նոր թափ մը սկսած են առնել այդ հանդիպումները, որոնց վերջինը նուիրուած էր Հայկական ծնունդին, մասնակցութեամբ՝ տասը սփիւռքահայ եւ հայրենի նկարիչներու:

Նկարներու գեղեցիկ փունջ մը կը ներկայացուէր նախաձեռնութեամբ արուեստի գործերու ծանօթ խնամատար (curator) Շողակ Յովհաննէսեանի, որ անցնող քանի մը տարիներուն Չիքակոյէն գալով ու վերջնականապէս Նիւ Ճըրզի կը հաստատուէր իր ամուսնոյն՝ յարգելի մեր ազգայինին՝ բժիշկ Րաֆֆի Յովհաննէսեանի հետ:

Կազմակերպութեամբ Հայոց առաջնորդարանին, յունուար 5 եւ 6-ին տեղի ունեցաւ ցուցահանդէսը, որուն բացման ներկայ գտնուեցաւ առաջնորդ Խաժակ արք. Պարսամեան: Ներկայ էին նաւ մասնակից նկարիչներէն՝ Վազգէն Գալայճեան եւ Ռուտիկ Պետրոսեան: Կը ցուցադրուէին նաեւ գործերը ծանօթ ֆրանսահայ նկարիչ Ասատուրի, չիքակոյաբնակ Շահնուրի եւ հայրենի Սարգիս Համալբաշեանի, Համլէթ Յովսէփեանի, Մարիամ Խաչատրեանի, Վահան Ռումելեանի, Արարատ Սարգսեանի եւ Արթիւ Սարգսեանի: Թիւով 72 գործ ցուցադրուեցան: Ցուցահանդէսին հասոյթին քառասուն տոկոսը տրամադրուեցաւ Ս. Վարդան շաբաթօրեայ դպրոցին: Յիշենք նաեւ, որ անցեալ տարուան հոկտեմբեր 29-ի կազմակերպուած ցուցահանդէսին հասոյթին մէկ մասը եւս տրամադրուած էր Մայր տաճարի տիկնանց օժանդակ յանձնաժողովին:

Յովսէփեան, այս ցուցահանդէսին ալումինիոմով, բրոնզով ու իւղաներկով ներկայացուած իր գործերով բերած էր մասնակցութիւն, իսկ մնացեալները՝ պաստառի կամ թուղթի վրայ: Անշուշտ, Ասատուր արդէն վարպետ նկարիչ է եւ անոր գործերը միջազգային շուկաներու մէջ կը գնահատուին բարձր արժէքով: Մինչ այդ հայրենի գեղարուեստի աշխարհին մէջ տակաւ բարձրացող հեղինակութիւն մըն է Սարգիս Համալբաշեանը, որ իր սրբապատկերային «հին» իւղաներկներով գրաւել սկսած է լուրջ հետաքրքրութիւն: Մինչ Արարատ Սարգսեանի խաչքարերը ուշագրաւ նորութիւն եղան ներկաներուն համար, թէեւ միւս կողմէ, արդէն անոր գործերը տարածուած են Հայաստանի մէջ:

Սփիւռքահայ նկարիչներէն Վազգէն իր շատ իւրայատուկ ոճովը արդէն վաւերական նկարիչ մըն է, մինչ Շահնուրի (Վարժապետեան) գործերը գերարդի նկարչութեան հետքերով կազմուած լուրջ նկարիչ մըն է, որուն ժողովրդականութիւնը տակաւին չէ ամրագրուած ամերիկահայութեան մօտ: Իսկ նիւճըրզիաբնակ, սակայն ղարաբաղցի արմատներով Ռուտիկի գործերը ունին հայրենի հողին եւ գոյնին գրաւչութիւնը եւ արդէն ինք, կամաց-կամաց, սկսած է յարգուիլ մեր արուեստասէր շրջանակին կողմէ: Մարիամ (Մօֆօ) անունով ծանօթ նկարիչին գործերը ներկաներուն համար եղան նորութիւն:

Շնորհաւորելի նախաձեռնութիւն մը, որ անշուշտ առանց Շողակին դժուար թէ կարենար յաջողութեամբ պսակուիլ: Ու արդէն, ազգային ամէն նախաձեռնութիւն, մա՛նաւանդ գաղթահայ կեանքէն ներս, եղած է այդպէս. գործը ի վերջո ծանրացած է նախաձեռնողին ուսերուն վրայ: Եւ Հայկական ծնունդի օրերուն հաւատացեալներ թէ արուեստասէրներ հարստացուցին իրենց հոգեկան աշխարհը հայ տաղանդաւոր նկարիչներու ստեղծագործութիւններով, մերթ տանելով անոնց սիրտերը դէպի հայրենի մեր սարերը եւ մերթ՝ դէպի Նիւ Եորքի պողոտաները:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ

Նիւ Ճըրզի

# Մարկ Բագլենի հայաստանյան լուսանկարների ցուցահանդես Մարսելում

Մարսելից ստացված տեղեկատվության համաձայն, հունվարի 25-ից մինչեւ փետրվարի 4-ը քաղաքի Հայ մշակույթի եւ երիտասարդության տանը անցկացվում է Մարկ Բագլենի հայաստանյան լուսանկարների ցուցահանդեսը «Հայաստանով խենթացած» նշանաբանով: Միջոցառման կազմակերպիչը LasManos Productions ընկերակցությունն է: Ցուցահանդեսի բացումը տեղի է ունեցել հունվարի 25-ին: Ներկայացված են Հայաստանին առնչվող 16 դիմապատկեր եւ 16 բնապատկեր, որոնք ուղեկցվում են գրող Մարտին Մելքոնյանի տեքստով: Մարկ Բագլենի ճամփորդական նոթերը հիմք են ծառայում հայկական ինքնությանը վերաբերող վավերագրական ֆիլմի համար, որի նկարահանումները Մարիամ Խաթլամաջյանի մասնակցությամբ իրականացվում են Երեւանում, Գյումրիում, Երուսաղեմում, Թավրիզում, ինչպես նաեւ Լոնդոնում եւ Աթենքում:

Պ. Ք.

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Ազգային հավաքականը Կիպրոս կմեկնի ընդլայնված կազմով




Ինչպես տեղեկացրել ենք, փետրվարի 28-ին եւ 29-ին ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը Կիպրոսում ստուգողական հանդիպումներ է անցկացնելու Սերբիայի եւ Կանադայի ընտրանիների հետ: Այդ հանդիպումներով մեր ընտրանին կսկսի նախապատրաստվել սեպտեմբերին մեկնարկելիք ֆուտբոլի աշխարհի 2014-ի առաջնության ընտրական մրցաշարին:

Ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը ՀՖՖ մամուլի քարտուղարությանը տեղեկացրել է, որ Կիպրոսում կազմակերպվելիք ուսումնամարզական հավաքի եւ անցկացվելիք ընկերական հանդիպումների հիմնական նպատակը հնարավորինս շատ թվով ֆուտբոլիստների փորձարկելն է: Ուստի ազգային հավաքականը Կիպրոս կմեկնի ընդլայնված կազմով, կհրավիրվի 26-28 ֆուտբոլիստ, որոնց հնարավորություն կընձեռվի մասնակցելու խաղերին: Բնականաբար, կհրավիրվեն հավաքականի հիմնական կազմի բոլոր ֆուտբոլիստները, կլինեն նաեւ նորեկներ: Ըստ Վարդան Մինասյանի, ավելի շատ խաղային ժամանակ կտրամադրվի այն ֆուտբոլիստներին, ովքեր անցած մրցաշրջանում քիչ են դուրս եկել խաղադաշտ:

Ինչպես հայտնի է, Ռոման Բերեզովսկին իռլանդացիների հետ խաղում դաշտից հեռացվելու պատճառով մեկ խաղով որակազրկված է, ուստի չի մասնակցելու Մալթայի հավաքականի հետ ընտրական մրցաշարի մեկնարկային խաղին: Այնպես որ բացառված չէ, որ Կիպրոսում հավաքականի դարպասն մեկ այլ դարպասապահ պաշտպանի, թեեւ Բերեզովսկին էլ է հրավիրվել հավաքի: Շատ հավանական է, որ ուսումնամարզական հավաքի հրավիրվի «Փյունիկի» նախկին դարպասապահ, ներկայումս Իրանում հանդես եկող Գրիգոր Մելիքսեթյանը, որի խաղը լավ տպավորություն էր թողել Վարդան Մինասյանի վրա: Ամեն դեպքում, ընկերական 2 հանդիպումները թույլ կտան հավաքականի մարզիչներին կարծիք կազմելու ֆուտբոլիստների ֆիզիկական վիճակի եւ խաղային ունակությունների վերաբերյալ, ինչը կօգնի հետագայում հավաքականի կազմն ընտրելու հարցում:

Ինչ վերաբերում է հավաքականի առաջիկա մրցակիցներին, ապա նախկինում մեր ընտրանին մրցել է միայն սերբերի հետ: Սերբիայի հավաքականը ներկայումս ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում 27-րդ հորիզոնականն է զբաղեցնում: Սերբերի հետ հայ ֆուտբոլիստները մրցել են 2008-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում: Առաջին խաղը կայացել է 2006-ի հոկտեմբերի 11-ին Բելգրադի «Ցրվենա Զվեզդա» մարզադաշտում: Խաղն անհաջող դասավորվեց Իան Պորտերֆիլդի սաների համար, որոնք մրցակցին զիջեցին 0-3 հաշվով: Մրցակիցների 2-րդ հանդիպումը կայացավ Պորտերֆիլդի մահից հետո: 2007-ի հոկտեմբերի 13-ին «Հանրապետականում» կայացած խաղում մեր հավաքականը գլխավորում էին Պորտերֆիլդի օգնականները՝ Թոմ Ջոնսն ու Վարդան Մինասյանը: Այդ խաղում դարպասները մնացին անառիկ:

ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում 74-րդ հորիզոնականը զբաղեցնող Կանադայի հավաքականի հետ մեր ընտրանին առաջին անգամ է մրցելու: Կանադան կլինի 52-րդ երկիրը, որի հետ կմրցեն հայ ֆուտբոլիստները: Նշենք, որ մինչ օրս ՀՀ ազգային հավաքականը մրցել է ամերիկյան մայրցամաքի 7 երկրների հավաքականների հետ: Մեր ֆուտբոլիստներին հաջողվել է հաղթել միայն Պարագվայի ընտրանուն (2-1), որի հետ 2-րդ խաղում պարտվել են (0-2): Միեւնույն 1-1 հաշվով են ավարտվել հանդիպումները Գվատեմալայի եւ Պանամայի հավաքականների հետ, իսկ մյուս 4 խաղերում մեր ընտրանին զիջել է ԱՄՆ-ի (0-1), Էկվադորի (0-3), Պերուի (0-4) եւ Չիլիի (0-7) հավաքականներին: Բոլոր 8 հանդիպումներն էլ ընկերական բնույթ են կրել:

## Մարիա Շարապովան ռեւանշի հասավ Պետրա Կվիտովայի նկատմամբ

Մարիա Շարապովան, շարունակելով հաղթարշավը թենիսի Ավստրալիայի բաց առաջնությունում, կիսաեզրափակիչում պարտության մատնեց չեխ Պետրա Կվիտովային (6-2, 3-6, 6-4) ու մտավ եզրափակիչ: Այսպիսով, Շարապովան ռեւանշի հասավ Կվիտովայի նկատմամբ անցյալ տարի Ուիմբլդոնի մրցաշարի եզրափակիչում կրած պարտության դիմաց:

Վճռորոշ մրցախաղում Շարապովան կմրցի բելառուս Վիկտորիա Ազարենկոյի հետ: Վերջինս դարձավ այդ երկրի 2-րդ ներկայացուցիչը, ում հաջողվեց մտնել «Մեծ սաղավարտ» մրցաշարի եզրափակիչ: Նախկինում դա հաջողվել էր Նատալյա Զվերեւային 1988-ին, երբ «Ռոլան Գարոսի» եզրափակիչում պարտվել էր Շտեֆի Գրաֆին:

Ազարենկոն եզրափակիչի ուղեգիր նվաճեց Կիմ Կլիյստերսի նկատմամբ տոնած հաղթանակի շնորհիվ (6-4, 1-6, 6-3): Վերջինս այս մրցաշրջանից հետո որոշել է ավարտել ելույթները:

Թենիսի Ավստրալիայի բաց առաջնության տղամարդկանց մրցաշարում հայտնի դարձավ եզրափակիչի առաջին մասնակիցը: Չափազանց համառ մրցապայքարում իսպանացի Ռաֆայել Նադալին հաջողվեց հաղթել շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերին (6-7, 6-2, 7-6, 6-4):



## «Իմպուլսը» 2-րդ պարտությունը կրեց

**Դիլիջանի «Իմպուլսը» Սոչիում անցկացվող ուսումնամարզական հավաքի ընթացքում ուժերը չափեց Տոմսկի «Տոմի» հետ ու պարտվեց 4-5 հաշվով: «Իմպուլսը» սկզբում հանդիպումը շահում էր 3-1 հաշվով շնորհիվ Նորայր Գյոզալյանի, Նարեկ Դավթյանի եւ Ռումյան Հովսեփյանի խփած գոլերի: 2-րդ խաղակեսի սկզբում Նորայր Գյոզալյանը 4-րդ գոլը խփեց: Սակայն հետագայում «Տոմի» ֆուտբոլիստներին հաջողվեց շահել հանդիպումը՝ հաղթական գնդակը խփելով 86-րդ րոպեին:**

**Այս հանդիպումը 2-րդն էր «Իմպուլսի» համար Սոչիի հավաքի ժամանակ: Առաջին խաղում էլ թիմը 0-2 հաշվով պարտվել էր Ստավրոպոլի «Դինամոյին»:**

## Հայաստանը կներկայացնեն 5 շախմատիստուհիներ

Մարտի 1-ին Թուրքիայի Գազիանթեփ քաղաքում կայանալիք շախմատի Եվրոպայի կանանց անհատական առաջնությունում Հայաստանը կներկայացնեն 5 շախմատիստուհիներ: Armchess.am-ի տեղեկացմամբ, Թուրքիայում հանդես կգան գրոսմայստերներ Էլինա Դանիելյանը, Լիլիթ Մկրտչյանը, Լիլիթ Գալոյանը, ՀՀ նորընծա չեմպիոնուհի Մարիա Կուրսովան եւ միջազգային վարպետ Աննա Հայրապետյանը:



## Արոնյանը միաժամանակյա խաղի սեանս կտա հայ բանտարկյալներին

**Գրոսմայստեր Լեւոն Արոնյանը հայ բանտարկյալների հետ միաժամանակյա խաղի սեանս կանցկացնի: Այս մասին տեղեկացրել է Հայաստանի արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը, նշելով, որ համապատասխան պայմանավորվածություն է ձեռք բերվել հայ երկու առաջատար գրոսմայստերների, այդ թվում՝ Լեւոն Արոնյանի հետ:**

**«Երբ շախմատիստը գտնվի Հայաստանում, նա քրեակատարողական հիմնարկներում միաժամանակյա խաղի սեանսներ կտա: Այսպիսով, մենք հույս ունենք զբաղեցնել բանտարկյալների ազատ ժամանակը: Այդ նպատակով մտադիր ենք նաեւ ֆուտբոլային մրցաշարեր կազմակերպել: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպես են իրենց ժամանակն անցկացնում բանտարկյալները, եթե զբաղմունք չունեն: Դրա համար էլ մենք օգտագործում ենք արտասահմանյան փորձը: Օրինակ, Ավստրիայում եւ Գերմանիայում բանտարկյալներն ազատ ժամանակի 80 տոկոսը զբաղված են: Դրա շնորհիվ մարդը մասնագիտություն է ձեռք բերում, ինչպես նաեւ հնարավորություն է ստանում գումար վաստակել իր ընտանիքի համար», նշել է նախարարը:**

**Մինչ Հայաստան վերադառնալը, Լեւոն Արոնյանը գերազանց ելույթներ է ունենում Վեյք Ան Զեեի շախմատի մրցաշարում՝ 10 տուրից հետո 7,5 միավորով միանձնյա գլխավորելով աղյուսակը: Այդ ելույթների շնորհիվ Արոնյանն իր ընթացիկ վարկանիշը բարձրացրել է 21,5-ով եւ այժմ ունի 2826,5 ռեկորդային գործակից: Իսկ ահա ՖԻԴԵ-ի դասակարգման ցուցակի առաջատար Մագնուս Կառլսենի գործակիցը ներկա պահին 2833,8 է, որը 1,2-ով նվազել է:**

**Արոնյանից հետո մեծ առաջընթաց է ունեցել իտալացի Ֆաբիանո Կարուանան՝ վարկանիշն ավելացնելով 17-ով: Այս պահին նրա վարկանիշը 2753 է:**

## Սարգսյանն ու Մովսիսյանը կրկին հաղթեցին

**Շախմատի Ջիբրալթարի մրցաշարի 2-րդ տուրն էլ հաջող էր հայ շախմատիստների համար: Սերգեյ Մովսիսյանը 2-րդ հաղթանակը տոնեց Մոհամեդ Ալ Սայեդի հետ մրցախաղում: Գաբրիել Սարգսյանն էլ պարտության մատնեց Ժոզեֆ Գալագերին: Վարուժան Հակոբյանը հաշտություն կնքեց Մարկ Առնոլդի հետ:**

**2 տուրից հետո 100 տոկոսանոց արդյունքով Մովսիսյանն ու Սարգսյանը 28 շախմատիստների հետ գլխավորում են աղյուսակը: 3-րդ տուրում Մովսիսյանը կմրցի Կայդո Կուլաոտսի հետ, իսկ Գաբրիելի մրցակիցը կլինի Սաբինո Բրունելոն:**

## Պատանեկան հավաքականը սկսեց նախապատրաստությունը

**Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականը սկսել է նախապատրաստությունը Եվրոպայի պատանեկան առաջնության 2-րդ փուլին: Հիշեցնենք, որ անցյալ տարի Երեւանում կայացած ընտրական մրցաշարում հայ ֆուտբոլիստները Վարազդատ Ավետիսյանի գլխավորությամբ հաջողությամբ էին լուծել հաջորդ փուլի ուղեգրի նվաճման խնդիրը: Եվ այժմ եզրափակիչի ուղեգրի համար պայքարում Հայաստանի հավաքականը մայիսի 23-28-ը Իտալիայում կայանալիք 2-րդ փուլում մրցելու է տանտերերի, Իսպանիայի եւ Բելգիայի իր հասակակիցների հետ:**

**Ինչ խոսք, մեր հավաքականին բավականին ուժեղ մրցակիցներ են բաժին հասել, ուստի անհրաժեշտ է լրջորեն նախապատրաստվել մրցաշարին: Նախապատրաստության շրջանակներում պատանեկան հավաքականը ստուգողական առաջին հանդիպումն անցկացրեց «Բանանցի» հետ: Հանդիպման ելքը վճռեց «Բանանցի» պաշտպան Հովհաննես Համբարձումյանի տուգանային հարվածով խփած միակ գոլը: Հանդիպմանը հետեւում էր նաեւ ՀՀ ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը:**

## Չեմպիոնը ջախջախեց նորեկին

**Նոր մրցաշրջանին նախապատրաստվող ՀՀ չեմպիոն «Ուլիսը» ստուգողական 2-րդ խաղում 5-0 հաշվով ջախջախեց նորաստեղծ «Մարտունի-Ալաշկերտին», որը մարզում է Ալբերտ Սարգսյանը: Ուլիսցիների կազմում արդյունավետությամբ աչքի ընկավ երկամյա ընդմիջումից հետո թիմ վերադարձած Արթուր Քոչարյանը՝ դառնալով 3 գոլի հեղինակ: Մեկական գնդակ էլ խփեցին Դավիթ Գրիգորյանն ու Պատոն:**

**Ստուգողական հաջորդ հանդիպումն «Ուլիսը» կանցկացնի հունվարի 31-ին «Միկայի» հետ, իսկ փետրվարի 3-ին թիմը կմեկնի Ուռեկի՝ ուսումնամարզական հավաքի:**

## Սենեգալը դուրս մնաց պայքարից



Ֆուտբոլի Աֆրիկայի գավաթի խաղարկությունում A խմբում ընդգրկված հավաքականները 2-րդ տուրի հանդիպումներն անցկացրին: 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Հասարակածային Գվինեայի ընտրանին՝ 2-1 հաշվով պարտության մատնելով Սենեգալի ֆուտբոլիստներին: Ընդ որում հաղթական գնդակն առաջնության կազմակերպիչները խփեցին ավելացված ժամանակում: Նրանք ժամկետից շուտ նվաճեցին հաջորդ փուլի ուղեգիրը: Իսկ Սենեգալի ընտրանին, որին ֆավորիտ էին համարում, դուրս մնաց հետագա պայքարից:

2-րդ ուղեգիրը նվաճելու լավ հնարավորություն ունի Զամբիայի հավաքականը, որը ոչ-ոքի (2-2) խաղաց Լիբիայի ընտրանու հետ: Զամբիայի ընտրանին վաստակել է 4 միավոր եւ հունվարի 29-ին մրցելու է առաջատարի հետ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ Օրվա հետքերով

# «Քնած գեղեցկուհու» բավականին արթուն «խայթոցները»

*Ռուսաստան, Սերբիա, Բոսնիա եւ Հերցեգովինա, Բելառուս, Ուկրաինա...*

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն այսօր նորակազմ բյուրոյի անդրանիկ նիստով, ապա նաեւ Եվրոպայում ժողովրդագրական շարժումների քննարկմամբ կավարտի ձմեռային նստաշրջանը, որ մեկնարկեց Մեւլութ Չավուշօղլուին տրված հրաժեշտով եւ վեհաժողովի նոր նախագահի Ժան-Կլոդ Մինյոնի ընտրությամբ, մարդու իրավունքների նոր հանձնակատար Նիլս Մուիժնիեկսի թեկնածության հաստատմամբ, որ իր լիազորությունների կատարմանը կանցնի արդեն ապրիլին, մինչ այդ լսելով նաեւ ներկայիս հանձնակատար Թոմաս Համմարբերգի վերջին տարեկան զեկույցը:

Եվրոպայի խորհուրդը, որքան էլ նորընտիր նախագահ Մինյոնը փորձում էր հակառակը ներկայացնել պաշտոնավարման հենց առաջին օրվանից, իրապես եւ շատերի համար նմանվել է «Ռենոսի ափին քնած գեղեցկուհու», թեեւ այս նստաշրջանում հյուրերի շարքում այնպիսի կարեւորության ու ազդեցության դեմք էր, ինչպիսին Միացյալ Թագավորության վարչապետն է: ՄԹ վարչապետ Դեւիդ Քամերոնն էլ, ի դեպ, վեհաժողովի առաջ ելույթ էր ունենում հենց փոփոխություններ ու բարեփոխումներ ակնկալողի ու առաջարկողի դիրքերից:

Ամեն դեպքում, Եվրոմիության անդամ, Եվրոպայի խորհրդի էլ անդամ Հունգարիայում կատարվող հակաժողովրդավարական նախաձեռնությունների ու իրավիճակի քննարկման փոխարեն վեհաժողովականները «ներկա վիճակի» քննարկման թեմայի տակ տեղավորեցին Ռուսաստանին՝ «երկու ընտրությունների արանքում»՝ սեփական ավելի մոտ «խոհանոցի» ցցուն խնդիրը թողնելով հետո քննարկելու տարբերակին: Այս քննարկումը, որ որեւէ ընդհանրական ձեւակերպում չստացավ, այդպես էլ մնաց որպես տարբեր պատվիրակների համար Ռուսաստանի մեղքերն ի ցույց դնելու կամ ի պաշտպանություն մի քանի խոսք ասելու հնարավորություն, որից լիովին եւ գրեթե ողջ պատվիրակությամբ, հասկանալի ուղղվածությամբ, օգտվեցին վրացի պատվիրակները:

Եթե Ռուսաստանին «բաց թողեցին» առանց ինչ-որ փաստաթղթային ձեւակերպման, ապա օրակարգային մի քանի հարցերում ընդունված բանաձեւերը «լավ բաներ» են պահանջում, բայց... Մասնավորապես, Բոսնիա եւ Հերցեգովինայից վեհաժողովը պահանջում է վերջապես ձեւավորվել չարչրկված ու արդեն ամիսներ ոչ ամբողջական մնացող կառավարությունը, ինչպես նաեւ սահմանադրական փոփոխություններով փոքրամասնությունների մասնակցությունը քաղաքական կյանքին:

Բոսնիա եւ Հերցեգովինան մնաց մոնիտորինգի տակ ճիշտ այնպես, ինչպես այդ վերահսկողությունից չազատվեց նաեւ Սերբիան, որի հարցով, ի դեպ, համազեկուցող էր հայաստանյան պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանը: Սերբիայի հարցում էլ վեհաժողովը հանձնարարեց շարունակել երկխոսությունը Պրիշտինայի հետ, կատարել արդեն իսկ ձեռք բերված համաձայնությունները, փոքրամասնությունների իրավունքների դատական պաշտպանություն ապահովել: Հարությունյանի՝ «**Ազգին**» տված մանրամասնմամբ՝ Սերբիայում մնացել են մի շարք լուրջ չլուծված խնդիրներ, սկսած կոռուպցիայի մակարդակից, դատական իշխանության հետ կապված խնդիրներ, լուրջ խնդիրներ ԶԼՄ-ների ազատության, ազգային փոքրամասնությունների իրավունքների առնչությամբ:

Քննադատվելու ու հանձնարարականներ ստանալու իր բաժինն ունեցավ նաեւ Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող Բելառուսը, դրա համար էլ այս երկրի կապակցությամբ բանաձեւն ու հանձնարարականն ուղղված են ԵԽ մյուս անդամներին՝ «օգտագործելու տարբեր լծակներ տարհամոզելու Բելառուսին», որ, ասենք, համապատասխանեցնի իր օրենսդրությունը միջազգայինին: Ինչպես ասում են, Բելառուսի բաժինը «ամբողջական էր». որ մարդու իրավունքների իրավիճակը Բելառուսում բարելավելու համար բելառուսներին անցագիր քիչ տրվի, տեղեկատվություն քիչ փոխանակվի եւ այլն:

Վեհաժողովի հսկողության տակ գտնվող Ուկրաինայի ժողովրդավարական ինստիտուտների գործառնման մասով էլ, Յուլյա Տիմոշենկոյի հարցով պահանջներ ներկայացնելուց զատ, ասացին ու խոսեցին ընտրական օրենսդրության փոփոխությունների մասին, որոնք բնավ էլ նպաստավոր չեն դիտվում, իսկ սպասվող խորհրդարանական ընտրությունները, ճիշտ եւ ճիշտ հայաստանյանի նման, ներկայացվում են որպես «լակմուսի թուղթ»՝ թե որքանով է Ուկրաինան հավատարիմ ժողովրդավարական սկզբունքներին:

Հիշեցնենք, որ այսօր կայանալիք նոր կազմով վեհաժողովի բյուրոյի նիստում հնարավոր է, որ անդրադառնան այդպես էլ մի քայլ առաջ չգնացած ղարաբաղյան հարցով հատուկ հանձնաժողովի «հետագա քայլերին», թեեւ հայաստանյան պատվիրակությունն արդեն իսկ հաստատել է, որ չի մասնակցելու հանձնաժողովի աշխատանքներին, ինչպես եւ վարվել է մինչ այս:

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Ստրասբուրգ**

ԵՐԵՎԱՆ

# Նշվեց Հնդկաստանի Հանրապետության օրը



**Երեկ Հնդկաստանի ազգային հիմնով ու պետական դրոշի բարձրացումով սկսվեց Հնդկաստանի Հանրապետության օրվա նշումը Հայաստանում:**

**Հնդկաստանի Հանրապետության 63-րդ տարվան նվիրված ընդունելությանը, որը կազմակերպել էր Հայաստանում Հնդկաստանի դեսպան Աչալ Կումար Մալհոտրան, միացել էին ինչպես այստեղ ապրող հնդիկները, այնպես էլ հայերը, որոնցից ամեն մեկն իր առնչությունն ունի Հնդկաստանին: Օրինակ՝ ազգային հիմնը կատարեցին Հումանիտար ինստիտուտի ուսանողները, որոնք սովորում են հինդի լեզվի բաժնում: Ապա դեսպանը փոխանցեց Հնդկաստանի նախագահի խոսքն՝ ուղղված հնդիկ ժողովրդին:**

**«Հաճախ է ասվում, սակայն մենք ամբողջությամբ չենք ըմբռնում, թե ինչքան երջանիկ ենք, որ ունենք ավանդույթների, արժեքների եւ ուսուցման մի հարուստ ժառանգություն: Մենք պետք է կառուցենք ուժեղ ու բարգավաճ պետություն՝ հիմնված արժեքների ամուր համակարգի վրա», ասել է Հնդկաստանի նախագահը:**

**Միջոցառմանը ներկա էին նաեւ հնդիկ ուսանողներ, որոնք սովորում են հիմնականում Երեւանի բժշկական համալսարանում: Նույնիսկ ուսանողներից Հիթեշը նշում է՝ եթե Հայաստանում լավ աշխատանք ունենա, ապա ավարտելուց հետո կմնա այստեղ:**

**Հիմա Հայաստանում միայն հնդիկ ուսանողների թիվը հասնում է շուրջ 500-ի:**

**«Ազգի» հետ զրույցում Աչալ Կումար Մալհոտրան անդրադարձավ նաեւ հայ-հնդկական հարաբերություններին. «Քաղաքական մակարդակում ունենք գերազանց փոխըմբռնում: Հիմա կենտրոնացրել ենք մեր ջանքերը՝ խթանելու նաեւ 2 երկրների միջեւ առեւտրատնտեսական հարաբերությունները»:** **Ի. Պ.**

# Հայտարարություն

Արարատի մարզպետարանը հայտարարում է մրցույթ «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար: Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ այն քաղաքացիները, որոնք ունեն բժշկական բարձրագույն կրթություն, մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացնելու օրը առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվում է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝

ա. Դիմում

բ. Մեկ լուսանկար 3X4 չափի

գ. Քաղվածք աշխատանքային գրքույկից

դ. Ինքնակենսագրություն

ե. Անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք նաեւ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչ. զինտեղամասի կցագրման վկայականի) պատճենները

զ. Բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել)

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջ. եւ սոցապ. վարչություն՝ 2012թ. հունվ. 10-29, ամեն օր՝ ժամը 10:00-17:00-ն: Մրցույթը կանցկացվի 2012 թ. փետրվարի 29-ին՝ ժ. 11:00-ին՝ մարզպետարանում:

# Վենետիկի համալսարանի հայ լեզուի եւ մշակոյթի ամառնային խտացեալ դասընթացք

**Օգոստոսի, 2012:** Վենետիկի համալսարանի հայ լեզուի եւ մշակոյթի ամառնային խտացեալ դասընթացքը, գործակցութեամբ Պո-Արաքս մշակութային ընկերակցութեան, տեղի պիտի ունենայ օգոստոս 1-20-ը: Քննութիւնները՝ օգոստոս 21-ին: Ժամանում՝ յուլիս 30-31-ին, մեկնում՝ օգոստոս 22-23-ին:

Դասընթացքը ունի չորս մակարդակ՝ բացարձակ սկսնակներէ մինչեւ յառաջադէմներ: Դասերը տեղի կ'ունենան երկուշաբթիէն ուրբաթ, օրը հինգ պահ՝ առաւօտեան: Դասերու ներկայութիւնը պարտադիր է: Մասնակցութեան համար պահանջուած նուազագոյն տարիքն է 18: Դիմումները պետք է կատարել անձամբ եւ գրաւոր, նշելով միշտ հեռախօսի, հեռապատճէնի (ֆաքս) թիւ մը եւ ելգրային (EM) հասցէ մը: Դասընթացքին զուգահեռ տեղի պիտի ունենան մշակութային այլեւայլ ձեռնարկներ:

Փափաքողներուն, կէսօրէ վերջերը, ձրիաբար պիտի աւանդուին նաեւ դուդուկի եւ հայկական պարերու դասեր:

Արձանագրութեան սակն է՝ 700 եւրո կամ համապատասխանը՝ տարաժոյթով ըստ օրուան սակին: Այս գումարին 500 եւրոյի բաժինը պէտք է վճարուի կանխաւ՝ մինչեւ մարտի 31-ը, այդ թուականէն վերջ պէտք է վճարուի 550 եւրո մինչեւ յունիս 30-ը: Արձանագրութեան մնացեալ մասը կը վճարուի անպայման մուտքի օրը: 10 տոկոս զեղչ մը կը կատարուի անոնց, որոնք նախապէս լաւ արդիւնքով մասնակցած են դասընթացքին, գոնէ երկու անգամ: Նոյն զեղչը կը կատարուի նաեւ միասին յաճախող մօտիկ ազգականներէն մեկուն (ծնողք, քոյր, եղբայր, կողակից): Արձանագրութեան սակը ոչ մէկ պարագայի կը փոխուի ու կատարուած վճարումը որեւէ պատճառով չի վերադարձուիր:

Ամէն վճարագիր (չէք), որ պէտք է անպայման դրամատնային եւ միջազգային ըլլայ, պէտք է հասցէագրուի միայն՝ Associazione Padus-Araxes եւ ղրկուի՝ Assoc. Padus-Araxes - c/o Dip. Studi Asiatici - San Polo 2035 - 30125 Venezia (Italia): Ընդունելի չեն անձնական եւ փոստային չէքերը: Ամէն չէք պէտք է ունենայ դրամատան երաշխիքը եւ յենու բաժնեկից իտալական դրամատան մը: Անոնք որ կը նախընտրեն դրամատնային փոխանցումով (bank transfer) վճարել, պիտի ստանան այս մասին հարկաւոր տեղեկութիւնները (հաշուի թիւ եւլն.): Դրամատնային բոլոր ծախսերը դիմողին կը պատկանին: Իսկ փոստի միջոցով փոխանցումը պէտք է կատարուի միայն միջազգային փոխագիրներու միջոցով, որ է՝ mandat-poste international / international money-order:

Կ'ընձեռուի բնակութեան հնարաւորութիւն համալսարանական ուսանողատուն մը՝ Վենետիկի պատմական կեդրոնին մէջ, օժտուած խոհանոցային յարմարութիւններով: Յուլիս 30-օգոստոս 22 ներառեալ, ամբողջ շրջանին համար, բնակութեան սակն է՝ 820 եւրո առանձին սենեակի մէջ, 610 եւրո երկու հոգինոց սենեակի մէջ: Բնակութեան վճարը, տուեալ ժամանակաշրջանի ընթացքին, ենթակայ չէ օրական հաշուարկումի: Ճաշ մը կամ ընթրիք մը, համալսարանի սեղանատան մէջ, պիտի արժէ 8 եւրո:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռապատճենել +39.041.2414448 թիւին, կամ ելգիր մը ուղարկել հետեւեալ հասցէին՝ daniela@padus-araxes.com: Ի հարկին հեռաձայնել +39.041.2414448 թիւին, երկուշաբթի եւ հինգշաբթի առաւօտները ժամը 10.30-12.30 եւ կամ +39.347.4562981 թիւին, չորեքշաբթի եւ ուրբաթ իրիկունները ժամը 20.00-21.30 (Իտալիոյ ժամով): Լաւ ստուգել երկիրներու միջեւ ժամերու տարբերութիւնը: Բացակայութեան պարագային կրկին փորձել եւ յստակ ու հասկնալի լուր մը թողուլ ընկալուչին՝ նշելով անուն եւ հեռախօսի համար: Երբեք չհեռաձայնել Վենետիկի համալսարանի գրասենեակներուն: Բջիջային համարին կարելի է զանգել նաեւ երկուշաբթի եւ հինգշաբթի առաւօտները:

# Ի գիտություն վարորդների

ՀՀ զինված ուժերի կազմավորման 20-րդ հոբելյանական տարեդարձին նվիրված Երևանի Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունենալիք տոնահանդեսի հետ կապված՝ հունվարի 27-ին, ժամը 17.00-ից մինչև 19.00-ն, ծանրաբեռնված կլինի երթեւեկությունը Լենինգրադյան-Հալաբյան փողոցների խաչմերուկից մինչեւ Լենինգրադյան-Ծիծեռնակաբերդի խճուղու հատվածում, որտեղ հնարավոր է նաեւ երթեւեկության դադարեցում:

Հայցում ենք մեր համաքաղաքացիների ներողամտությունը:

ՎԱՐՁՈՎ Է ՏՐՎՈՒՄ
ավտոտնակ-պահեստ
(11մx4մx3մ) չափերի
«Ֆիրդուսնոցի» հարակից
տարածքում:
093-42-57-92

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 26.1.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: